Social Innovations for Vocational Education and Employability of Young People with Disabilities
Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2017

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից
This project is funded by
the EUROPEAN UNION

Մասնագիտական կրթության բարեփոխումներ ՀԿ
Professional Education Reforms NGO

Սեյվ դը չիլդրեն
Save the Children

Զեռնարկի մշակումն իրականացվել է «Սեյվ դը չիլդրեն» և «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» կազմակերպությունների կողմից՝ «Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» (SIVEE) ծրագրի շրջանակներում և նախատեսված է նախնական/ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ոլորտում քաղաքականություն մշակողների և որոշում կայացնողների համար:

Ծրագիրն իրականացվում է «Սեյվ դը չիլդրեն» և «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» կազմակերպությունների համագործակցությամբ՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Իրավիճակի վերլուծության մեջ արտահայտված տեսակետները փորձագետներինն են և կարող են չարտացոլել Եվրոպական միության և «Սեյվ դը չիլդրեն»-ի տեսակետները:

«ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ»

© 2017 «Սեյվ դը չիլդրեն»

Ազատության պող. 27, 3-րդ հարկ

ՀՀ, ք. Երևան 0014

Հեղինակ՝ Սամվել Պիպոյան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խմբագիր՝ Իռեն Սարգսյան, Կրթության և երիտասարդության հարցերով փորձագետ, «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

1. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ 11

2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ 11

3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 13

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 32

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 1 63

ՀԱՎԵԼՎԱԾ 2 66

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԿՈՒ	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում
ՆԿ	Ներառական կրթություն
ՆՄԿ	Ներառական մասնագիտական կրթություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՈՒԱ	Հաշմանդամություն ունեցող անձինք
ԿԱՊԿՈՒ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրագնդի վրա ավելի քան 1 միլիարդ մարդ ունի այս կամ այն տեսակի հաշմանդամություն և շուրջ 200 միլիոն մարդ իրենց կենսագործունեության ընթացքում առնչվում է զգալի դժվարությունների ու արգելքների՝ առողջապահական, կրթական, տնտեսության և այլ ոլորտներում ունենալով մասնակցության համեմատաբար ցածր ու աղքատության ավելի բարձր ցուցանիշներ: Նման իրավիճակը մասամբ պայմանավորված է նրանով, որ Հաշմանդամություն ունեցող անձինք (ՀՈՒԱ) առողջապահական, կրթական, զբաղվածության, տրանսպորտային և տեղեկատվություն ստանալու ծառայությունների գործընթացում բախվում են զանազան արգելքների, ինչպիսիք են՝ օրենսդրական ու նորմատիվային այլ փաստաթղթերում առկա անկատար չափանիշներն ու ընթացակարգերը, հասարակության կարծրատիպային վերաբերմունքը, մատչելի ծառայությունների բացակայությունը, տեղեկատվության և հաղորդակցության ոչ բավարար լինելը, գենդերային խտրականությունը, որոշումների կայացման գործընթացներում ՀՈՒԱ-ների անբավարար մասնակցությունը և այլն:

Հայաստանում ՀՈՒԱ-ները ևս բավական մեծ քանակ են կազմում, և 2016 թվականի հունիսի 30-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված է եղել 202 839 անձ, որոնց վիճակագրական բաշխվածությունը ներկայացվում է ստորև՝

Պատկեր 1



Պատկեր 2



Աղբյուրը՝ ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 12-ի արձանագրային որոշումից

Այստեղ հարկ է նշել, որ ՀՀ-ում ՀՈՒԱ-ների մեծ մասը (շուրջ 65%-ը) աշխատունակ տարիքի է (18-ից 63 տարեկան), սակայն նրանցից զբաղված է միայն շուրջ 10 %-ը (http://disabilityarmenia.am): Զբաղվածության նման ցածր տոկոսը աշխատունակ տարիքի ՀՈՒԱ-ների մոտ պայմանավորված է մի շարք գործոններով՝ համապատասխան աշխատատեղերի, ձեռներեցության և աշխատաշուկայում հավասար մրցակցային պայմանների բացակայությամբ, գործատուների կողմից ՀՈՒԱ-ների աշխատանքի ընդունելու դժկամությամբ, նպաստավոր պետական քաղաքականության կամ դրա մասին համապատասխան տեղեկատվության բացակայությամբ, մասնագիտական կրթություն և որակավորում չունենալու հանգամանքով և այլն: Առանձնահատուկ ուշադրություն է գրավում այն փաստը, որ ՀՈՒԱ-ների շատ քիչ տոկոսն է, որն ունի մասնագիտական կրթություն: Եվ ընդհանրապես, նրանցից շատ քչերն են ընդգրկված եղել Միջին մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ) ոլորտում: 1990-ական թթ. վերջին և 2000-ական թթ. առաջին տասնամյակի ընթացքում ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական 109 ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր տարի ընդունվել և սովորել են մինչև 50 հաշմանդամություն ունեցող անձինք: Եվ չնայած որ վերջին տարիներին ավելի քան 2 անգամ մեծացել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ յուրաքանչյուր տարի ընդունված ՀՈՒԱ-ների քանակը (100-120 անձ), միևնույն է, այդպիսի ընգրկվածությունը դեռևս էապես չի կարող նպաստել այդ խոցելի խմբի զբաղվածության աճին, դրանով իսկ ՀՈՒԱ-ների սոցիալական ինտեգրմանը, կենսամակարդակի բարելավմանը, վերընթաց սոցիալական շարժունակությանը և ավելի բարձր սոցիալ-տնտեսական դիրքի ապահովմանը: Իսկ մասնագիտական կրթությունը մի գործոն է, ինչը կարող է նպաստել ՀՈՒԱ-ների զբաղվածության հնարավորությունների մեծացմանը և կենսամակարդակի բարձրացմանը: Սակայն, այստեղ էլ ամեն ինչ միանշանակ չէ: Ինչպես ցույց են տալիս համապատասխան ուսումնասիրությունները[1],

[1] Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը Հայաստանում. Կարիքներ և խոչընդոտներ. Զեկույց

մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորել ցանկացող ՀՈՒԱ-ների թիվը 1.6 անգամ պակաս է սովորել չցանկացողների թվից: Փորձագետները գտնում են, որ դա որոշ չափով պայմանավորված է ՀՈՒԱ-ների առողջական վիճակով, հասարակության մեջ տարածված կարծրատիպերով և առավել չափով՝ տարիքով: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ նոր արհեստ սովորելու ցանկությունը հակադարձ համեմատական է տարիքին. բարձր տարիքային խմբում (46-62 տարեկան) սովորել ցանկացողների հարաբերակցությունն ավելի երիտասարդ տարիքային խմբերի (18-35 և 36-45 տարեկան) մոտ 2.7 անգամ ցածր է: Նման իրավիճակը վկայում է այն մասին, որ ավելի երիտասարդ ՀՈՒԱ-ների շրջանում մեծ է այն գիտակցումը, որ լավ կրթությունն ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մասնագիտությունն առանցքային գործոն են աշխատանք գտնելու և իրենց սոցիալ-տնտեսական դրությունը բարելավելու համար: Այդ գործընթացի իրականացման համար ՀՈՒԱ-ները կարևորում են հատկապես տեղական աշխատաշուկայի կարիքներից բխող և դրանք ապահովող արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունը: Նման իրավիճակում, ՀՈՒԱ-ների մասնագիտական զբաղվածության ապահովման խնդիրը շարունակում է մնալ ոլորտի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից: Հաշմանդամություն ունեցող անձանց՝ որպես աշխատաշուկայում անմրցունակ անձանց, կայուն զբաղվածությունը խթանելու և աշխատանքային ներուժն առավել արդյունավետ իրացնելու նպատակով՝ անհրաժեշտ է ներդնել նոր մոտեցումներ, ընդլայնել խրախուսման մեխանիզմները: Սակավ աշխատատեղերը, աշխատանքային միջավայրի ոչ մատչելի լինելը, գործատուների և աշխատողների կարծրատիպերը, խտրական վերաբերմունքը, հատուկ տեխնոլոգիաների բացակայությունը լուրջ խոչընդոտ են հարցի լիաժեք կարգավորման համար: Մյուս կողմից, կրթության ոլորտում առկա խնդիրների պատճառով քիչ է համապատասխան մասնագիտացում կամ որակավորում ունեցող ՀՈՒԱ-ների թիվը: Եվ, ինչպես վկայում է միջազգային փորձը, ներառական մասնագիտական կրթությունը կարող

որակական հետազոտության արդյունքների վերաբերյալ, 2013, էջ 101-102)

է վերացնել զբաղվածության և հաշմանդամության միջև բացը: Մասնագիտական գիտելիքների և հմտությունների ընդլայնումը թույլ են տալիս թե՛ զարգացնել ՀՈՒԱ-ների ունակությունները՝ դարձնելով մրցունակ, թե՛ ընդլայնել հնարավորությունները՝ ապահովելով զբաղվածություն:

Իրավիճակը շտկելու, ՀՈՒԱ-ների սոցիալական ներառումն ապահովելու և ոլորտում համակարգված քաղաքականություն իրականացնելու նպատակով՝ ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «ՀՈՒԱ-ների սոցիալական ներառման 2016-2021թթ համալիր ծրագիրը» (այսուհետ՝ համալիր ծրագիր):

Համալիր ծրագրի նպատակն է՝ ամրագրել ՀՈՒԱ-ների սոցիալական ներառմանն ուղղված հիմնական ուղղությունները, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ՀՈՒԱ-ների սոցիալական ներառումն ապահովող համապարփակ միջոցառումների ցանկը, սահմանել դրանց կատարման համար պատասխանատու մարմինները, կատարման ժամկետները, ֆինանսավորման աղբյուրները, թիրախներն ու արդյունքները առաջիկա հինգ տարիների համար: Համալիր ծրագրում արձանագրված է, որ կրթության ոլորտում ևս իրականացվում են օրենսդրական բարեփոխումներ՝ ապահովելու ՀՈՒԱ-ների կրթության իրավունքը: Այսպես, Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հանրակրթության ոլորտի մի շարք ուսումնական հաստատություններում 2015-2016 թթ. ուստարում ներդրված է ներառական կրթություն (ՆԿ) իրականացնող 203 հանրակրթական դպրոցներում սովորել են 4706 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ (ԿԱՊԿՈՒ): Համաձայն 2014թ. դեկտեմբերի 1-ին «Հանրակրթության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ մինչև 2025 թվականը ՀՀ բոլոր հանրակրթական դպրոցներում կներդրվի ՆԿ համակարգը, իսկ հատուկ դպրոցները կվերակազմավորվեն մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների: Նախատեսվել է ՀՈՒԱ-ների համար բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում արտոնյալ պայմաններով կրթության կազմակերպում: Համալիր ծրագրով կարևորվել է, որ կրթության ոլորտում շարունակում է առաջնահերթ կարգավորման խնդիր մնալ

ուսումնական հաստատությունների ֆիզիկական և բովանդակային մատչելիությունը. ուսումնական հաստատությունները հիմնականում մատչելի չեն ՀՈՒԱ-ների ազատ տեղաշարժման համար, ուսումնական ծրագրերը պետք է մշակվեն ՀՈՒԱ-ների առանձնահատուկ կրթական կարիքներին համապատասխան, մանկավարժների գերակշիռ մասը վերապատրաստված չէ, չունեն ՀՈՒԱ-ների հետ աշխատելու հմտություններ և գիտելիքներ, ունեն կարծրատիպեր խնդիրներ ունեցող անձանց հանդեպ, հաճախ դրսևորվում է խտրական վերաբերմունք. դրանով հանդերձ՝ նրանք չեն կարողանում աշակերտների մեջ սերմանել ճիշտ վերաբերմունք այդ անձանց հանդեպ:

ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագրում ևս մեկ անգամ ուշադրության է արժանացել ՆԿ համակարգի ներդրումը հանրակրթության ոլորտում, որի առումով նշված է. «2017-2022 թվականների ընթացքում ապահովել հատուկ դպրոցների համակարգի վերափոխումը և անցումը համընդհանուր ՆԿ համակարգին»:

Կարևորելով ՀՈՒԱ-ների մասնագիտական կողմնորոշումը և ներառական մասնագիտական կրթության ոլորտի զարգացումը՝ 2012թ-ից «Սեյվ դը չիլդրեն» հասարակական կազմակերպության կողմից (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և Զբաղվածության պետական գործակալության համագործակցությամբ) իրականացվում է «ՀՈՒԱ-ների կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագիրը, որի աջակցությամբ հանրապետությունում ընդլայնվել և հիմնվել է 19 սոցիալական ձեռնարկություն, որտեղ աշխատանքի է տեղավորվել 200 հաշմանդամություն ունեցող անձ: 2016 թ. հունվարից «Սեյվ դը չիլդրեն» և «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» կազմակերպությունները Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացնում են «Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» (SIVEE) ծրագիրը: Այս ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում սոցիալական նորարարությունների՝ մասնավորապես սոցալական ձեռնարկությունների ստեղծմանն ու ներմուծմանը՝

խթանելու հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար աշխատանքի հավասար հնարավորությունների ստեղծումը՝ որպես մարդու հիմնարար իրավունք: Ծրագիրը իրականացվում է Երևանում և Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի մարզերում՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ), ՄԿՈՒ հաստատությունների, հատուկ և գիշերօթիկ դպրոցների, ՀՈՒԱ-ների հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների և ՀՈՒԱ-ների հետ սերտորեն համագործակցությամբ:

1. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Տվյալ վերլուծության նպատակն է եղել.

1. ուսումնասիրել ՀՈՒԱ-ների ներգրավվածությունը ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում,
2. ուսումնասիրել ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ՆԿ առկայությունը և զարգացման մակարդակը,
3. առաջարկություններ ներկայացնել ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներդրման, ՀՈՒԱ-ների ներգրավման և զբաղվածության ապահովման մեխանիզմների վերաբերյալ:

2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Տվյալ վերլուծության շրջանակներում տեղեկատվությունը հավաքվել է 2014-2017 թթ. ընթացքում՝ ստորև ներկայացված մեթոդներով.

- փաստաթղթերի վերլուծություն,
- փորձագիտական հարցազրույցներ,
- հարցաթերթիկներ,
- պաշտոնական հարցումներ,
- ֆոկուս-խումբ
- մասնագիտական գրականության ուսումնասիրում:

Փաստաթղթերի վերլուծության մեթոդով ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերի փաթեթները.

- ծրագրային և ռազմավարական փաստաթղթեր, ոլորտը կարգավորող օրենսդրական ակտեր, կառավարության որոշումներ, ԿԳՆ հրամաններ, երաշխավորություններ,
- ոլորտին առնչվող սոցիոլոգիական հետազոտությունների հաշվետվություններ, ձեռնարկներ, ուղեցույցներ,
- էլեկտրոնային ԶԼՄ-ներ ու կայքէջեր:

Փորձագիտական հարցազրույցներ են անցկացվել ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒ վարչության պետի, վարչության 4 աշխատակցների, վերապատրաստման դասընթացներին մասնակցած 37 վարչական աշխատողի և դասախոսի հետ՝ ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներկա վիճակի և դասախոսների կարիքները վերհանելու նպատակով: Պաշտոնական հարցումներ են կատարվել ՀՀ ԿԳՆ և ՀՀ ԱՍՀՆ, թիրախային մարզերի կրթության վարչությունների համապատասխան աշխատակիցներից: ՀՀ ԿԳՆ-ը տրամադրել է նաև 2015-16 ուսումնական տարում ՄԿՈՒ հաստատություններ ընդունված ՀՈՒԱ-ների քանակական տվյալներն ըստ հաշմանդամության տեսակների:

ՄԿՈՒ 90 ուսումնական հաստատության 386 դասախոսի և վարչական աշխատողի կողմից լրացված հարցաթերթիկների օգնությամբ վերհանվել ու վերլուծվել են իրականացված վերապատրաստման դասընթացների արդյունավետությանը, վերապատրաստվողների ՆԿ ուսուցման մեթոդների տիրապետման և այդ մեթոդների ուսուցման գծով ինքնուրույն դասընթացներ վարելու կարողության ձևավորման նպատակով ստացված գիտելիքների պիտանելիությանն առնչվող խնդիրները:

Ֆոկուս-խումբ մեթոդի օգնությամբ քննարկվել են ՄԿՈՒ համակարգում ՆԿ համակարգի ներդրման հնարավորությունները Երևան քաղաքի և Արմավիրի ու Կոտայքի մարզերի առանձին ՄԿՈՒ հաստատությունների 15 տնօրենի հետ:

Սույն ձեռնարկի մշակման համար հավաքվել է նաև տեղեկատվություն թիրախային՝ Երևանի, Արագածոտնի, Արմավիրի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում 2015-2016 թթ ուսումնական տարում հաշմանդամություն ունեցող ուսանողների վերաբերյալ[2], ինչը ներկայացված է Հավելված 1-ում ներկայացված աղյուսակում:

[2] Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ՄԿՈՒ վարչության, ինչպես նաև յուրաքանչյուր կրթական հաստատության կողմից՝ համապատասխան գրությամբ կամ հեռախոսազանգով:

3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՄԿՈՒ համակարգում ՀՈՒԱ-ների ներգրավումն ու հետագա ուսումնառության կազմակերպման համատեքստում ենթադրվում է, որ ՄԿՈՒ գործընթացները պետք է իրականացվեն ՆԿ սկզբունքներին հավատարիմ: Մինչ այժմ ՄԿՈՒ համակարգում ՀՈՒԱ-ների ուսուցանման սակավաթիվ գործընթացները, որոնք իրականացվել են միջազգային փորձի հաշվառմամբ և հաշմանդամություն ունեցող ուսանողներին ուսումնական հաստատության մեջ ինտեգրման ճանապարհով, էական հաջողություններ չեն արձանագրել ո՛չ բովանդակային, ո՛չ էլ քանակական առումներով: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է հասկանալ, թե ինչպես կարող են վերհանվել ՀՈՒԱ-ների ՆՄԿ իրականացնելու հիմնախնդիրները հետևյալ հարցադրումների շրջանակներում.

- *որո՞նք են ՀՈՒԱ-ների ՄԿՈՒ ստանալուն նպաստող նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուժեղ կողմերը,*
- *որո՞նք են ՀՈՒԱ-ների ՄԿՈՒ ստանալու համար նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թույլ կողմերը,*
- *որո՞նք են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ՀՈՒԱ-ների մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու արտաքին հնարավորությունները,*
- *որո՞նք են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ՀՈՒԱ-ների մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու արտաքին խոչընդոտները:*

Վերոգրյալ հարցադրումների շրջանակներում իրականացված ուսումնասիրություններն ու քննարկումները ոլորտի փորձագետների հետ ցույց են տալիս, որ ՄԿՈՒ մատուցելու տեսանկյունից նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների **<u>ուժեղ կողմեր</u>** են համարվում այն, որ այդ կազմակերպությունները՝

- առաջարկում են աշխատաշուկայի զանազան ոլորտների ու դրանց պահանջներին համապատասխան տարբեր մասնագիտական կրթական ծրագրեր և մասնագիտություններ,

- հնարավորություններ են ստեղծում քաղաքացիների, այդ թվում և ՀՈՒԱ-ների իրենց նախասիրություններին հարիր տարբեր մասնագիտությունների ընտրության և հետագա ուսումնառության համար,
- պատրաստակամ են ՀՈՒԱ-ների մասնագիտական կրթությունն ապահովելու գործում՝ հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման գործընթացներում կիրառելով նաև ՆԿ ապահովման համար անհրաժեշտ սկզբունքները,
- բավարարում են աշխատաշուկայի պահանջները տարբեր մասնագիտություններ ունեցող որակավորված մասնագետներով՝ ուսանողների ու շրջանավարտների մոտ ձևավորելով անհրաժեշտ գործնական կարողություններ և հմտություններ,
- հաշվի են առնում աշխատաշուկայի պահանջները ուսուցանվող մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում,
- համագործակցում են գործատուների հետ և կազմակերպում են ուսանողների արտադրական պրակտիկաները նրանց կազմակերպություններում,
- հնարավորություն ունեն ուսանողների մասնագիտական ուսուցումը կազմակերպել և իրականացնել գործատուների մոտ, այդ թվում և անհատական ուսուցման եղանակով (վարպետային ուսուցում),
- ունեն կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան շատ թե քիչ բավարար նյութատեխնիկական հագեցվածություն՝ ուսանողների ուսումնական պրակտիկաները և գործնական ուսուցումը ուսումնական հաստատության արհեստանոցներում, լաբորատորիաներում անցկացնելու,
- ունեն կրթական ծրագրերի կազմակերպման ու իրականացման հստակ ժամանակացույց և ուսումնամեթոդական փաստաթղթեր,
- որոշ դեպքերում տրամադրում են անհրաժեշտ հոգեբանական աջակցություն ՀՈՒԱ-ների և նրանց ընտանիքներին,

- մի շարք մարզերում ունեն ՀՈՒԱ-ների կրթության ապահովման կարիքների և ՆԿ սկզբունքների մասին իրազեկված, մեթոդապես որոշակիորեն վերապատրաստված մանկավարժական և վարչական համակազմ,
- բաց են ուսուցման նոր մեթոդների ներդրման ու դրանցով իրենց աշխատանքային գործունեությունը ծավալելու նկատմամբ,
- որոշ դեպքերում ստեղծել են կարիերայի կենտրոններ:

Միաժամանակ ՄԿՈՒ հաստատությունների վերոգրյալ ուժեղ կողմերի հետ առկա մի շարք **թերությունները** ՀՈՒԱ-ների ՄԿՈՒ ստանալու համար: Մասնավորապես ՄԿՈՒ հաստատություններում.

- չեն մշակվում ՀՈՒԱ-ների համար նախատեսված ուսուցման անհատական ուսումնական պլաններ ՄԿՈՒ իրականացնելու ընթացքում,
- շենքային պայմանները մեծամասամբ հարմարեցված չեն ՀՈՒԱ-ների համար ՄԿՈՒ կազմակերպելու համար,
- խիստ սահմանափակ են վճարովի ծառայությունները և դրանցից ստացված եկամուտները,
- ոչ միշտ է նյութատեխնիկական բազան հագեցած ժամանակակից սարքերով, սարքավորումներով, գործիքներով,
- խիստ սահմանափակ է իրականացվում հեռավար ուսուցման ձևը,
- լիարժեք ներդրված չէ մանկավարժական և վարչական համակազմի վերապատրաստման համակարգը ՆԿ մեթոդոլոգիաների կիրառման առումով,
- հիմնականում բացակայում են ՆԿ արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագետները (հատուկ մանկավարժ, հոգեբան, սուրդո-մանկավարժ, էրգոթերապիստ, սոցիալական աշխատող, այլն),
- ուսուցանման ընթացքում առկա են ՀՈՒԱ-ների մոտ հոգեբանական, ներանձնային, միջանձնային (համակուրսեցիներ, հասարակություն) հարաբերությունների, միջավայրի հետ ինտեգրման խնդիրներ, որոնք չեն լուծվում ուսումնական հաստատությունների կողմից,

- բժշկասոցիալական փորձագիտական հանձաժողովների կողմից ՀՈՒԱ-ներին տրված ոչ լիարժեք եզրակացությունները և հակացուցումները թույլ չեն տալիս ավելի արդյունավետ իրականացնել նրանց մասնագիտական կրթությունը,
- ընդունելության ընթացքում դիմորդներից չի պահանջվում ներկայացնել բժշկական տեղեկանք առողջության մասին,
- անբավարար են ՀՈՒԱ-ների լիարժեք ՄԿՈՒ ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական, այդ թվում և լրացուցիչ ֆինանսական միջոցները,
- նախատեսված չէ անհրաժեշտության դեպքում ՀՈՒԱ-ների համար տրանսպորտային կարիքների բավարարումը բնակության վայրից դեպի ուսումնական հաստատություն և հակառակը,
- ՆԿ իրականացման գործընթացներում բացակայում է միջուսումնական համագործակցությունը կամ այն շատ սահմանափակ է:

Վերոգրյալ խնդիրների լուծման գործընթացում ինչպես փորձի փոխանակման, այնպես էլ առաջարկությունների ներկայացման համար որոշակի դրական ազդեցություն կարող է ունենալ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ՆԿ իրականացման փորձի[3] ուսումնասիրումը և կիրառումը: Հարկ է նշել, որ նման մոտեցումը թույլ կտա ավելի լիարժեք ըմբռնելու ՆԿ իրականացման հիմնական ոլորտների՝ միջավայրի և իրավական դաշտի բարելավման, վերաբերմունքի փոփոխություն և կարողությունների զարգացման հիմնախնդիրները և գտնելու դրանց լուծման ուղիները: Մասնավորապես դա կարող է առնչվել ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի անհրաժեշտ հագեցվածության, նպատակային ֆինանսավորման, դասախոսամանակավարժական որակյալ անձնակազմի ձևավորման, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների վերհանման, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, անհատական ուսումնական

[3] «ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում»: «Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013թ.

պլանների մշակման, շահակիցների ներգրավման, օրենսդրական փոփոխությունների իրականացման խնդիրներին, որոնց լուծման ուղիները հանրակրթության ոլորտում կարող են արդիական և համահունչ լինել ՄԿՈՒ ոլորտի համար:

Բացի վերոգրյալից, ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ՀՈՒԱ-ների կրթություն ստանալու առումով շատ կարևոր է արտաքին հնարավորությունների և խոչընդոտների վերհանումը: Մասնավորապես, <u>ՄԿՈՒ հաստատությունների կողմից ՀՈՒԱ-ների կրթություն մատուցելու բարենպաստ արտաքին հնարավորություններ կարելի է դիտարկել՝</u>

- առանձին բարենպաստ օրենսդրական և նորմատիվային ակտերի առկայությունը,
- պետության կողմից ՀՈՒԱ-ների սատարելու քաղաքական կամքի առկայությունը,
- կրթական համակարգում իրականացվող որոշ բարեփոխումները և պետական աջակցման առանձին ծրագրերի առկայությունը,
- աշխատաշուկայում առանձին մասնագիտությունների գծով աշխատատեղերի առկայությունը և որակյալ մասնագետների պահանջը,
- պետության, գործատուների և միջազգային կազմակերպությունների կողմից սահմանափակ, սակայն պարբերաբար տրամադրվող դրամաշնորհները,
- գործատուների մասնակցությունը պետական կրթական չափորոշիչների մշակման աշխատանքներին,
- գործատուների շրջանում ՀՈՒԱ-ների աշխատանքի ընդունելու պայմանների վերաբերյալ իրազեկվածության աստիճանական մեծացումը,
- ՄԿՈՒ ստանալու տարբեր՝ հեռակա, հեռավար, դրսեկ, անհատական (վարպետային) ուսուցման ձևերի առկայությունը,
- ՀՈՒԱ-ների կրթական խնդիրները լուծելու գործընթացներում քաղաքացիական հասարակության և որոշ միջազգային

կազմակերպությունների ակտիվությունը, այդ ոլորտում նրանց համագործակցությունը ՀՀ պետական լիազոր մարմինների հետ,

- ՆԿ իրականացման հանրապետական և միջազգային փորձի առկայությունը,
- ՆԿ մասին գովազդի հնարավորությունը ԶԼՄ-ներով:

Միաժամանակ <u>ՄԿՈՒ հաստատություններում ՀՈՒԱ-ների ընդգրկելու, ինչպես նաև արդյունավետ կրթություն մատուցելու արտաքին խոչընդոտներ են՝</u>

- ՀՈՒԱ-ների համար արդյունավետ ՄԿՈՒ ստանալու համար ՀՀ օրենսդրության անկատարությունն իր ամբողջության մեջ,
- սոցիալական ապահովության անբարվոք քաղաքականությունը ՀՈՒԱ-ների և նրանց ընտանիքների նկատմամբ,
- միջավայրի անմատչելիությունը ՀՈՒԱ-ների լիարժեք կենսագործունեությունն ապահովելու համար (տրանսպորտ, ենթակառուցվածքներ, այլն),
- գործազրկության մեծ տոկոսը հասարակության մեջ,
- աշխատատեղերի հարմարեցված չլինելը ՀՈՒԱ-ների կարիքներին,
- գործատուների մոտ առկա կարծատիպերը ՀՈՒԱ-ների նկատմամբ, գործատուների վատ իրազեկվածությունը ՀՈՒԱ-ների կարիքների, նրանց հնարավորությունների, պետական աջակցման ծրագրերի մասին,
- պետության կողմից ներդրվող ֆինանսական միջոցների անբավարարությունը,
- ՀՈՒԱ-ների ցածր ինքնագնահատականը և մասնագիտական կրթություն ստանալու մոտիվացիայի պակասը,
- ընտանիքների անդամների ոչ բարեհաճ վերաբերմունքը ՀՈՒԱ-ների ինքնադրսևորման ու ինքնաբացահայտման նկատմամբ,
- մասնագիտական կողմնորոշման համակարգի դեռևս անկատար լինելը՝ ՀՈՒԱ-ների ՄԿՈՒ համակարգ ուղղորդելու և նրանց կարիքները լիարժեք բացահայտելու համար և այլն:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների, որ այսօր ՀՀ-ում դեռևս բացակայում է ՀՈՒԱ-ների կարիքներին միտված և ՄԿՈՒ համակարգ ուղղորդող մասնագիտական կողմնորոշման համակարգը՝ դրանով իսկ չնպաստելով ՀՈՒԱ-ների մասնագիտական կողմնորոշում ստանալուն, ՄԿՈՒ համակարգում արդյունավետ ներգրավմանը: ՀՈՒԱ-ների մեծ մասը տարբեր դժվարությունների և խոչընդոտների պատճառով ցանկություն չի ցուցաբերում կամ մոտիվացված չէ ՄԿՈՒ համակարգում ընդգրկվելու համար: Այդ դժվարություններին և խոչընդոտներին են պատկանում ՀՈՒԱ-ներին ուղեկցողի ինստիտուտի բացակայությունը, ՀՈՒԱ-ների տեղաշարժի, տրանսպորտային միջոցներից ազատորեն օգտվելու, օժանդակող ենթակառուցվածքների բացակայության խնդիրները, նրանց նկատմամբ հասարակության տարբեր խավերի, այդ թվում և գործատուների կանխակալ ոչ բարենպաստ կարծիքի առկայությունը: Դեռևս ցածր է ՀՈՒԱ-ների ինքնագնահատականը, որին նպաստում է նաև ընտանիքի անդամների ոչ բարեհաճ վերաբերմունքը ՀՈՒԱ-ների ինքնադրսևորման ու ինքնաբացահայտման նկատմամբ: Դեռևս անկատար են ՀՈՒԱ-ների մասին առկա տեղեկատվական բազաները, ինչը դժվարեցնում է նրանց հետ կապի հաստատման և հետագայում ՄԿՈՒ ոլորտ ներգրավման գործընթացների կազմակերպումը և իրականացումը:

Անբավարար են ՀՈՒԱ-ների լիարժեք ՄԿՈՒ ստանալու համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանները: Մասնագիտական ուսումնական հաստատություններում առաջին հերթին դա ՀՈՒԱ-ների համար շենքային պայմանների մատչելիության սահմանափակ հնարավորություններն են (բացակայում են թեքահարթակները և վերելակները, սանհանգույցները, դասասենյակները, կաբինետները, լաբորատորիաները, արհեստանոցները, սպորտային դահլիճները, սննդի կազմակերպման վայրերը հարմարացված չեն ՀՈՒԱ-ների կարիքներին և այլն):

Հարկ է նշել, որ մինչ այժմ էլ ՄԿՈՒ համակարգը բովանդակային առումով և առկա անձնակազմով լիարժեք պատրաստ չէ ՆԿ իրականացնելուն: Դրան է

նպաստում նաև այն, որ դեռևս բացակայում է ՀՈՒԱ-ների համար ՄԿՈՒ իրականացնելու ընթացքում ուսուցման անհատական ուսումնական պլանների մշակման փորձը: Ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչական անձնակազմի մեծ մասը դեռևս բավարար պատրաստված չէ ՆԿ մեթոդոլոգիաների կիրառման առումով: Դեռ ավելին՝ նրանցից շատերն ունեն կանխակալ և կարծրատիպային վերաբերմունք ՀՈՒԱ-ներին կատմամբ՝ որպես անընդունակ, հիվանդ երեխաների, որոնց հետ անիմաստ է ժամանակ ծախսել, քանի որ ոչ մի լուրջ գիտելիք չեն կարող ընկալել: Մինչ այժմ էլ անբավարար է կամ իսպառ բացակայում է ՆԿ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագետների առկայությունը (հոգեբան, սուրդո-մանկավարժ, էրգոթերապիստ, հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող և այլն): Ուսումնական հաստատությունները ճկուն չեն կիրառելու կրթության և ուսուցման տարբեր՝ հեռավար, դրսեկ, հեռակա ձևեր և մեթոդներ, խիստ սահմանափակ են ուսուցանման կարճաժամկետ ծրագրերը ՀՈՒԱ-ների համար, ուսուցանման ընթացքում չեն լուծվում ՀՈՒԱ-ների հոգեբանական, ներանձնային, միջանձնային (համակուրսեցիներ, հասարակություն) հարաբերությունների, միջավայրի հետ ինտեգրման խնդիրները, անբավարար են ՀՈՒԱ-ների լիարժեք մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, այդ թվում և աշխատակիցների աշխատավարձը, բացակայում է միջուսումնական համագործակցությունը կամ այն շատ սահմանափակ է: Բացակայում են բժշկական հակացուցումները ՀՈՒԱ-ների մասնագիտական այս կամ այն կրթական ծրագիրը իրականացնելու համար, ԲՍՓՀ-ների անբարենպաստ եզրակացությունները թույլ չեն տալիս ավելի արդյունավետ իրականացնել մասնագիտական կրթությունը, իսկ ուսումնական հաստատություն ընդունելության ընթացքում դիմորդների կողմից առողջության մասին բժշկական տեղեկանք ներկայացնելու պահանջի բացակայությունը թույլ չի տալիս ուսումնական հաստատություններին ստեղծել անհրաժեշտ անհատական պայմաններ ԿԱՊԿՈՒ ուսանողների համար:

ՀՈՒԱ-ների առումով դեռևս անկատար է կրթության և աշխատանքային օրենսդրությունը, որի արդյունքում նրանց չի ցուցաբերվում անհրաժեշտ պետական աջակցություն, վարվում է սոցիալական ապահովության անբարվոք քաղաքականություն ՀՈՒԱ-ների և նրանց ընտանիքների նկատմամբ, աշխատատեղերը հիմնականում հարմարեցված չեն ՀՈՒԱ-ների կարիքներին, շատ մեծ է գործազրկության տոկոսը ՀՈՒԱ-ների շրջանակներում համապատասխան աշխատատեղերի բացակայության պատճառով, լիարժեքորեն չեն համապատասխանում աշխատաշուկայի և ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչների պահանջները, գործատուները վատ են իրազեկված ՀՈՒԱ-ների կարիքների, նրանց հնարավորությունների, պետական աջակցման ծրագրերի մասին կամ չեն ցանկանում ծանոթանալ դրանց, պետական և ինքնակառավարման մարմիններն անբավարար աշխատանք են տանում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության համակարգ և աշխատաշուկա ներգրավման համար:

ա. ՄԿՈՒ ոլորտում ՆԿ իրականացման օրենսդրական հիմնախնդիրները և դրանց վերլուծությունը

ՀՀ-ում ՄԿՈւ ոլորտում ՆԿ արդյունավետ ներդրման համար առանձնահատուկ նշանակություն կարող է ունենալ բարենպաստ օրենսդրական դաշտի առկայությունը: Ներկայում ՀՈՒԱ-ների սոցիալական պաշտպանությանն առնչվող հարաբերությունները հիմնականում կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով: Չնայած օրենքում պարբերաբար կատարվել են փոփոխություններ և լրացումներ, այնուամենայնիվ, ամրագրված սկզբունքներն ու մոտեցումները դարձել են ժամանակավրեպ և չեն համապատասխանում ՀՈՒԱ-ների սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված և ճանաչված չափանիշներին: Գործող օրենսդրությամբ ՀՈՒԱ է համարվում այն անձը, ով, առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանվածության անհրաժեշտություն: Այս մոտեցումը հիմնված է առավելապես հաշմանդամության

բժշկական մոդելի վրա, որի դեպքում հաշվի չեն առնվում անձի գործունեության և մասնակցության առանձնահատկությունները, ինչպես նաև արտաքին գործոնները, որոնք կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ դրանց վրա:

Բացի վերոգրյալից, ՀՀ օրենսդրության, միջազգային օրենսդրության, իրավական նորմերի և չափանիշների հետ համեմատությունը բացահայտել է հետևյալ հիմնական խնդիրներն՝ ըստ առանձին օրենսդրական ակտերի.[4]

«Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 23.06.2011թ.)

ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրում հիմնականում անդրադարձ է կատարված հանրակրթության համակարգում ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածության վրա: Ծրագիրը նախատեսնում է ստեղծել փոխադարձ կապեր համայնքների և ուսումնական հաստատության ու հատուկ դպրոցների միջև, նպաստել ԿԱՊԿՈՒ և սոցիալական դժվար պայմաններում գտնվող երեխաներին հասարակության մեջ ներառելու գործընթացին, ինչպես նաև համայնքի զարգացմանն ուղղված աշխատանքներում ներգրավվել սոցիալապես խոցելի ընտանիքներին:

Ծրագրում ԿԱՊԿՈՒ անձանց կրթություն ստանալու թերևս ամենակարևոր մասերից է 82-րդ կետի գ. ենթակետը, համաձայն որի ԿԱՊԿՈՒ երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորություններն ընդլայնելու նպատակով ստեղծվելու են ՆԿ հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում: Բացի այդ, նույն կետի ե. ենթակետով նախատեսվել է 10%-ով մեծացնել ընդգրկվածությունը մասնագիտական կրթական ծրագրերում, հատկապես ի հաշիվ խոցելի խմբերի երիտասարդների:

Այդ առումով ծրագրով հանրակրթության ոլորտում նախատեսվել են մի շարք հիմնական միջոցառումներ, որոնք են՝

[4] «Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության և մասնագիտական կրթությանը վերաբերող ՀՀ օրենսդրության վերլուծություն», «Ունիսոն» հասարակական կազմակերպություն, 2012:

1. Հանրակրթական դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման հնարավորությունների ընդլայնումը,

2. ԿԱՊԿՈՒ երեխաների բացահայտման և կրթության մեջ նրանց ներգրավման արդյունավետ համակարգի ձևավորումը,

3. Հատուկ դպրոցների համակարգի օպտիմալացումը:

Ինչպես տեսնում ենք, ԿԱՊԿՈՒ անձանց առումով ծրագիրը բարեփոխումներ է նախատեսնում իրականացնել միայն հանրակրթության ոլորտում և այստեղ անդրադարձ չի կատարվել ՆԿ ներդրման հնարավորությանը ՄԿՈՒ համակարգում: Ծրագրով սահմանված միակ հնարավորությունը, որը ՄԿՈՒ համակարգը կարող է ներգրավել ԿԱՊԿՈՒ անձանց, մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ստեղծման դրույթն է:

«Կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 14.04.1999թ.)

Այս օրենքը ՀՀ կրթության ոլորտի մայր օրենքն է, որը սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը: Այս առումով խիստ կարևոր է, որ օրենքում լինեն այնպիսի ձևակերպումներ, որոնք հնարավորություն կտան ապահովելու կրթության այլ օրենքների, մասնավորապես «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի առկա և առաջարկվող դրույթների իրականացումը՝ ուղղված ապահովելու ԿԱՊԿՈՒ անձանց մասնագիտական կրթություն ստանալու մատչելիությանը և այդ կրթությունը ստանալու բնականոն պայմանների ապահովմանը: Այդ իսկ պատճառով կրթության այս իրավական ակտի դիտարկումը պետք է նպատակ ունենա վերլուծության միջոցով ներկայացնել այնպիսի առաջարկություններ, որոնք միտված կլինեն օրենքում լրացումներ կատարելուն՝ ուղղված ՀՈՒԱ-ների մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի մատչելիության ապահովմանը և հիմնված կլինեն նույն օրենքի հոդված 6-ի մաս 6-ի, այն է՝ «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է

ստեղծում ԿԱՊԿՈՒ քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով» դրույթի վրա:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 25.05.2005թ.)

Այս օրենքը ՀՀ այն հիմնական իրավական ակտերից է, որը կարգավորում է ԿԱՊԿՈՒ անձանց՝ իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ անձանց կրթության կազմակերպման բնագավառում հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքում տեղ են գտել բազմաթիվ դրույթներ, որոնք մինչ այժմ չեն իրականացվել, որի արդյունքում ՀՈՒԱ-ների մեծ մասի համար մի շարք պատճառներով (ՀՈՒԱ-ների համար կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ տարածքների, կառույցների, ուսուցման համար անհատական տեխնիկական միջոցների և սարքավորումների, համակարգչային դասարանների, վերականգնողական կաբինետների, մարզական և հանրային միջոցառումների, սննդի, բժշկական սպասարկման, առողջարարական և բուժիչ-կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման, կենցաղ-տնտեսական և սանիտարահիգիենիկ սպասարկման բացակայություն և այլն) անմատչելի է ՄԿՈՒ ոլորտում ընդգրկվելը և համապատասխան մասնագիտական կրթություն ստանալը: Այս իսկ պատճառով արդիական է մի շարք ենթաօրենսդրական փաստաթղթերի մշակումը, ինչը թույլ կտա առավել արդյունավետորեն կիրարկել այս օրենքի դրույթները:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 08.07.2005թ.)

Այս օրենքը ՀՀ այն հիմնական իրավական ակտն է, որը կարգավորում է ՄԿՈՒ համակարգում ՀՀ պետական քաղաքականության սկզբունքները,

կազմակերպական-իրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Ինչպես սահմանում է Օրենքի հոդված 4-ը, «Պետությունը պայմաններ է ստեղծում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի բնականոն գործունեության և զարգացման համար», իսկ նույն հոդվածի 1-ին մասի 9-րդ ենթակետը սահմանում է, որ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մատչելիությունը: Սակայն, այս օրենքում հստակ սահմանված չեն այնպիսի դրույթներ, որոնք միանաշանակ կապահովեին ԿԱՊԿՈՒ անձանց մասնագիտական կրթություն ստանալու մատչելիությունը և կապահովեին այդ կրթությունը ստանալու բնականոն պայմանները: Այդ իսկ պատճառով այս իրավական ակտի դիտարկումը պետք է նպատակ ունենա վերլուծության միջոցով ներկայացնել այնպիսի առաջարկություններ, որոնք միտված կլինեն օրենքում լրացումներ կատարելուն՝ ուղղված ՀՈՒԱ-ների մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի մատչելիության ապահովմանը և հիմնված «Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի մաս 6-ի այն դրույթի վրա, որ «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ԿԱՊԿՈՒ քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»:

բ. ՀՈՒԱ-ների ներգրավվածության առկա վիճակը ՄԿՈՒ հաստատություններում

Ինչպես նշեցինք վերևում, Հայաստանում ՀՈՒԱ-ները 2016 թվականի հունիսի 30-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված է եղել 202 839 անձ, այդ թվում 1-ին խումբ՝ 5,0%, 2-րդ խումբ՝ 39,1%, 3-րդ խումբ՝ 52.0%, հաշմանդամ երեխա՝ 3,9%: Հաշմանդամություն ունեցող անձիք կազմում են բնակչության 6.7 %-ը, [5] ընդ որում տղամարիկ կազմում են 51.5%, կանայք՝ 48.5%: Հաշմանդամություն

[5] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայք www.mlsa.am

ունեցող աշխատունակ տարիքի (18-ից 63 տարեկան) անձիք կազմում են 63,4%, երիտասարդ տարիքի անձիք (18-ից 40 տարեկան)՝ 13,0%, 40-ից 63 տարեկան անձիք՝ 50,4%, կենսաթոշակային տարիքի անձիք՝ 32.6%:[6] Զբաղվածների ընդհանուր թվից ՀՈՒԱ կազմում են 11%-ը: Զբաղվածության նման ցածր տոկոսը աշխատունակ տարիքի ՀՈՒԱ-ների մոտ պայմանավորված է բազմաթիվ գործոններով, սակայն առանձնահատուկ ուշադրություն է գրավում այն փաստը, որ ՀՈՒԱ-ների շատ քիչ տոկոսն է, որն ունի մասնագիտական կրթություն: Եվ ընդհանրապես, նրանցից շատ քչերն են ընդգրկված եղել ՄԿՈՒ ոլորտում, ինչի մասին է վկայում 1990-ական թթ. վերջին և 2000-ական թթ. առաջին տասնամյակի ընթացքում ՀՀ ՄԿՈՒ 109 ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր տարի ընդունված և սովորած ՀՈՒԱ-ների քանակը (տարեկան մինչև 50 հոգի): Եվ չնայած որ 2013-2014 ուսումնական տարում միայն Արարատի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում[7] նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական հաստատություններում ընդունված ՀՈՒԱ-ների քանակը մեծացել է ավելի քան 2 անգամ (2015 թ. դրությամբ շուրջ 110 անձ)[8] այն դեռևս բավարար չէ:

Ինչպես ցույց են տալիս համապատասխան ուսումնասիրությունները[9], ՀՈՒԱ-ների ՄԿՈՒ հաստատություններում սովորել ցանկացողների թիվը 1.6 անգամ պակաս է սովորել չցանկացողների թվից: Փորձագետները գտնում են, որ դա որոշ չափով պայմանավորված է ՀՈՒԱ-ների առողջական վիճակով, հասարակության մեջ տարածված կարծրատիպերով և առավել չափով՝ տարիքով: Ավելին, նոր արհեստ սովորելու ցանկությունը հակադարձ համեմատական է տարիքին. բարձր տարիքային խմբում (46-62 տարեկան) սովորել ցանկացողների հարաբերակցությունն ավելի երիտասարդ տարիքային խմբերի (18-35 և 36-45 տարեկան) մոտ 2.7 անգամ ցածր է:

---

[6] ibid

[7] Այս մարզերում նման թվաանակի աճը պայմանավորված է «Սեյվ դը չիլդրեն» -ի LIFE ծրագրի շրջանակներում 2012-2014 թթ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ներգրավմամբ իրականացված գործողություններով:

[8] ՀՀ Կրթության և գիտության նախարարության 2015 թ. Գործունեության հաշվետվություն

[9] Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը Հայաստանում. Կարիքներ և խոչընդոտներ. Զեկույց (որակական հետազոտության արդյունքների վերաբերյալ, 2013, էջ 101-102), LIFE Ծրագիր, Սեյվ դը չիլդրեն, Երևան

Այնուամենայնիվ, «Սեյվ դը չիլդրեն»-ի LIFE ծրագրի շրջանակներում 2012-2014 թթ. իրականացված «Աջակցություն Հայաստանում մասնագիտական կրթությանը» դրամաշնորհային բաղադրիչի արդյունքում հաշմանդամություն ունեցող շուրջ 900 երիտասարդ հնարավորություն է ունեցել ստանալու երկարաժամկետ կամ կարճաժամկետ մասնագիտական կրթություն և ձեռք բերել շուկայում մրցունակ մասնագիտական հմտություններ, իսկ նրանցից 200-ն ունեցել են նաև ուսումնական պրակտիկա անցնելու հնարավորություն:

Սույն ձեռնարկի մշակման համար շտեմարան ծառայող իրավիճակի նախնական վերլուծության շրջանակներում հավաքվել է նաև տեղեկատվություն թիրախային՝ Երևանի, Արագածոտնի, Արմավիրի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի ՄԿՈՒ հաստատություններում 2015-2016 թթ ուսումնական տարում հաշմանդամություն ունեցող ուսանողների վերաբերյալ[10], ինչը ներկայացված է Հավելված 1-ում ներկայացված աղյուսակում:

Ինչպես վկայում են այդ աղյուսակի տվյալները, 2015-2016 ուսումնական տարում **թիրախային** ՄԿՈՒ հաստատություններ ընդունված 3826 ուսանողից 132-ը (մոտ 3.5 տոկոսը) հաշմանդամություն ունեցողներ են, որոնցից 34-ը կամ հաշմանդամություն ունեցողների 25.8 տոկոսը ունեն մտավոր խնդիրներ, 26-ը կամ հաշմանդամություն ունեցողների 19.7 տոկոսը՝ հենաշարժողական, 21-ը կամ հաշմանդամություն ունեցողների 15.9 տոկոսը՝ տեսողական, 11-ը կամ հաշմանդամություն ունեցողների 8.3 տոկոսը՝ լսողական, 8-ը կամ հաշմանդամություն ունեցողների 6.2 տոկոսը՝ խոսքային, 32-ը կամ հաշմանդամություն ունեցողների 24.2 տոկոսը՝ այլ:

Հարկ է նշել, որ վերոգրյալ մարզերում և Երևան քաղաքում 01.06.2016թ-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» ՏՀ-ում հաշվառված են 14-20 տարեկան 2473 անձ: Այս առումով թիրախային ՄԿՈՒ հաստատություններում հաշմադամների ներգրավվածությունը բավական ցածր և կազմում է շուրջ 5.3 տոկոս:

[10] Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ՄԿՈՒ վարչության, ինչպես նաև յուրաքանչյուր կրթական հաստատության կողմից՝ համապատասխան գրությամբ կամ հեռախոսազանգով:

Վերոգրյալ տվյալները թույլ են տալիս ավելի հասցեական մշակել ապագա ծրագրերը՝ ելենելով հաշմանդամություն ունեցող ուսանողների կարիքներից:

գ. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգում ներառական կրթության համակարգի ներդրման առաջին գործընթացները

Ներառումը մի գործընթաց է, որն ուղղված է և արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին՝ մեծացնելով նրանց մասնակցությունը ուսման մեջ, մշակութային ու համայնքային կյանքում, դրանով իսկ նվազեցնելով անտեսումը կրթության մեջ և կրթական համակարգից: Ներառումը պետք է համապատասխան կերպով արձագանքի կրթական բազմազան կարիքներին ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ձևաչափերում:

Ներառում նշանակում է նաև կրթական և սոցիալական ձևաչափերի բարեփոխում՝ կրթական կառույցների և կառավարման ոլորտում առկա նոր միտումներին համահունչ մնալու նպատակով: Ներառում նաև նշանակում է ներդրումների, գործընթացների և միջավայրերի բարելավում, որը կոչված է նպաստելու կրթությանն ինչպես սովորողի մակարդակում՝ նրա ուսումնական միջավայրում, այնպես էլ՝ կրթական համակարգի մակարդակում, որը նպաստում է ուսմանը:

Ներառական նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը կարող է ապահովել ՀՈՒԱ զբաղվածությունը: Այդ գործընթացում կարևորվում են հատկապես տեղական աշխատաշուկայի կարիքներից բխող և դրանք ապահովող արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունը: Եվ իրոք, ինչպես ցույց են տալիս զանազան հետազոտություններ (մասնավորապես՝ Թուրինյան գործընթաց, 2012), լավ կրթություն ստացած և բարձրակարգ հմտություններ ունեցող աշխատողների եկամուտներն ավելի բարձր են, քան ավելի ցածր կրթություն ստացած աշխատողներինը: Բացի այդ, լավ կրթություն ստացած անհատների շրջանում գործազրկությունն ավելի ցածր

մակարդակի է, և այն ունի ավելի կարճ տևողություն, քան ավելի պակաս կրթվածների շրջանում:

Ցավոք, ՀՀ-ում դեռևս շարունակում է մեծագույն խնդիր հանդիսանալ ՀՈՒԱ-ների համար ՄԿՈՒ համակարգի մատչելիության և ՆԿ կազմակերպման հարցերը:

ՆԿ զարգացմանն գործում մեծ դեր ունեն ՄԿՈՒ դասախոսներն ու վարչական աշխատողները, որոնց օժանդակում են ծնողները և բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել:

ՄԿՈՒ համակարգում կրթության ներառականության ապահովման մակարդակը կարելի է գնահատել ըստ դասախոսական և վարպետական անձնակազմի ու ուսանողների համապատասխան վերապատրաստման, հատուկ ուսումնական նյութերի առկայության, ինչպես նաև ֆիզիկական մատչելիության ապահովման:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում հանրակրթական դպրոցում ՆԿ ապահովելու ուղղությամբ բավական աշխատանք է իրականացվել, ՄԿՈՒ համակարգում ձեռնարկված միջոցառումները դեռևս սակավաթիվ են:

Այս առումով առանձնակի կարևորություն ունի ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորված և «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից իրականացված LIFE ծրագիրը, որի շրջանակներում «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» ՀԿ-ի հետ համագործակցությամբ ՄԿՈՒ հաստատությունների վարչական և մանկավարժական աշխատակիցների համար 2013-2016թթ. ընթացքում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են մարզերի և Երևան քաղաքի շուրջ 90 ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների 1045 վարչական աշխատող, դասախոս և արտադրական ուսուցման վարպետ[11]:

[11] «2014 թ-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ մասնագիտական կրթության ուսումնական հաստատություններում աշխատում են մոտ 4000 դասախոս ու վարչական աշխատող» ՀՀ Կրթության և գիտության նախարարության 2015 թ. Գործունեության հաշվետվություն http://www.armstat.am/en/?nid=126&id=19138

Ընդհանուր առմամբ, ելնելով գնահատումների վերլուծության արդյունքներից (Հավելված 2), իրականացված վերապատրաստման դասընթացները ծառայել են նախատեսված նպատակներին հասնելուն և նպաստել են ունկնդիրների գերակշռող մասի մոտ ներառական կրթության անհրաժեշտության գիտակցման ու ՆԿ իրականացնելու պատրաստակամության մակարդակի էապես բարձրացմանը՝ զինելով նրանց համապատասխան գիտելիքներով և ուսուցման մեթոդներով: Միաժամանակ, ունկնդիրների ինքնագնահատման և գնահատման հարցաթերթիկների վերլուծված վերոգրյալ ցուցանիշները կարող են հիմք հանդիսանալ հետագայում դասընթացների որակի բարելավման աշխատանքներ իրականացնելու համար:

Վերոգրյալ գործընթացի արդյունավետությունն էլ ավելի խթանելու նպատակով LIFE ծրագրի շրջանակներում մշակվել է «Նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական հաստատությունների դասավանդողների համար ՀՈՒԱ-ների հետ աշխատելու ձեռնարկ» և որոշ այլ մասնագիտական/մեթոդական ձեռնարկներ:

Բացի այդ, LIFE ծրագրի շրջանակներում հանրապետության տարբեր մարզերի միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ներկայացնող 46 ուսանող մասնակցել է «ՀՈՒԱ-ների հետ հաղորդակցվելու առանձնահատկություններ» ճամբարային դասընթացին: Միաժամանակ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում հիմնվել է սոցիալական ձեռնարկություն, որտեղ LIFE ծրագրի շրջանակներում վեբ դիզայնի և համակարգչային գրաֆիկայի կարճաժամկետ դասընթացներին մասնակցած հաշմանդամություն ունեցող երիտասարդները հնարավորություն են ստացել անցնելու երկարաժամկետ աշխատանքի:

LIFE ծրագրի նպատակներից է եղել նաև բարձրացնել ԿԱՊԿՈՒ երեխաների և նրանց ծնողների իրազեկությունը հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի վերաբերյալ: Մասնավորապես LIFE ծրագրի թիմը կանոնավոր հանդիպումներ է անցկացրել հատուկ գիշերօթիկ և ներառական դպրոցներում սովորող հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց

ծնողների հետ (ծնող-երեխա խմբեր)՝ ուսումնասիրելու համար ընտանիքների և երեխաների տեսլականը ապագա հնարավորությունների վերաբերյալ՝ շեշտելով երեխաների շարունակական մասնագիտական կրթության կարևորությունը հետագայում նրանց զբաղվածությունն ապահովելու գործում: Մինչ այժմ LIFE ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող շուրջ 600 երեխա և երիտասարդ ներգրավվել են ծնող-երեխա խմբերում և մասնագիտական կողմնորոշման դասընթացներում: Այս հանդիպումների անցկացմանը ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև հատուկ գիշերօթիկ և ներառական դպրոցների ուսուցիչները, ովքեր ծանոթանում են մասնագիտական կողմնորոշման ժամանակակից մոտեցումներին և իրենց ուսանողների հետագա միջին մասնագիտական կրթության և զբաղվածության հնարավորություններին:

«Սեյվ դը չիլդրեն»-ի LIFE ծրագրի շրջանակներում 2012-2014 թթ իրականացված «Աջակցություն Հայաստանում մասնագիտական կրթությանը» դրամաշնորհային բաղադրիչի արդյունքում 10 ՄԿՈՒ հաստատություններ բարելավվել են շենքերի ֆիզիկական մատչելիությունը:

Եվրամիության կողմից 2013-2015 թթ. տրամադրված ֆինանսական օժանդակության միջոցով վերանորոգման գործընթացներ են կատարվել 7 ՄԿՈՒ հաստատություններում՝ ՆԿ-ն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԿՈՒ համակարգ ՀՈՒԱ-ների ներգրավման ու ՆԿ համակարգի ներդրումը ենթադրում է գործողությունների մի այնպիսի մոտեցումների և առաջարկությունների մշակում, ինչը թույլ կտա սահմանել և/կամ համակարգել ՆԿ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ գործողությունները՝ դրանք առավել նպատակային դարձնելու նպատակով:

ա. Առաջարկություններ ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներդրման, ՀՈՒԱ-ների ներգրավման և հետագա զբաղվածության ապահովման գործընթացի վերաբերյալ

ՀՀ ՄԿՈՒ համակարգում ցանկացած գործողություն կամ միջոցառում իրականացնելու համար անհրաժեշտ է իրավական հիմք, և առաջին հերթին, օրենսդրական ակտեր և նորմեր: Ինչպես նշվեց ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ՀՈՒԱ-ների ընդգրկելու, ինչպես նաև արդյունավետ ՄԿՈՒ մատուցելու արտաքին խոչընդոտների մեջ՝ ՀՈՒԱ-ների համար արդյունավետ մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու համար ՀՀ օրենսդրությունն դեռևս անկատար է իր ամբողջության մեջ: ՀՀ կրթության ոլորտի, մասամբ նաև զբաղվածության ոլորտի օրենսդրությունը դեռևս կարիք ունի որոշակի լրամշակումների ՄԿՈՒ ոլորտում ՆԿ-ն արդյունավետ կազմակերպելու և այն ՀՈՒԱ-ների կարիքներին համապատասխանեցնելու համար: Առանց օրենսդրական բարեփոխումների հնարավոր չէ արդյունավետ իրականացնել որևէ այլ գործընթաց, ինչը կարող է հանգեցնել ՆԿ որակի ապահովմանը ՄԿՈՒ համակարգում: Ըստ սահմանված կարգի՝ նման գործընթացները պետք է նախանշվեն օրենքների կողմից (առանձին բացառություններով հանդերձ) և, այնուհետև, դրանք կարող են կարգավորվել գործադիր իշխանության կողմից սահմանված առանձին իրավական ակտերով՝ կարգադրություններով, որոշումներով, հրամաններով հաստատված օրինակելի կարգերով, երաշխավորություններով, կանոնադրություններով և այլն: Նման օրենսդրական ու դրանից բխող ենթաօրենսդրական իրավական դաշտի առկայությունը թույլ կտա

այնուհետև իրականացնել առավել նպատակային և արդյունավետ գործողություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը, դեռևս 2012-14 թթ. աշխատանքներ են տարվել ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներդրման, ՀՈՒԱ-ների ներգրավման և հետագա զբաղվածության ապահովման մի այնպիսի մոդելի մշակման ուղղությամբ, որի բաղադրիչների (գործողությունների) հաջորդական կամ զուգահեռ իրականացումը և կիրառումը ժամանակի մեջ կարող է հաջողության հանգեցնել ՄԿՈՒ համակարգում ՆԿ համակարգի աստիճանական ներդրման գործընթացներին: Առաջարկվող մոդելը բազմիցս քննարկվել է ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների համակարգում ներգրավված պաշտոնատար անձանց, վարչական և դասախոսական անձնակազմի հետ, կատարվել են համապատասխան շտկումներ այդ քննարկումների ընթացքում հնչած առաջարկությունների և դիտողությունների հիման վրա: Արդյունքում ձևավորվել է մոդելի ներկայիս տարբերակը, որի բաղադրիչները ներկայացվում են ստորև:

1. ՆԿ կազմակերպման ու արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ օրենսդրության առկայությունը

Այն կարող է իրականանալ միայն ՀՀ Ազգային ժողովում՝ ՀՀ առկա օրենսդրական փոփոխությունների ու լրամշակումների արդյունքում, որոնց նախաձեռնողները կարող են լինել միայն ՀՀ ԱԺ պատգամավորները կամ ՀՀ կառավարությունը (կառավարման պետական լիազոր մարմինների մասնակցությամբ): Այս առումով սահմանափակ է ՆԿ իրականացնող կազմակերպությունների անմիջական մասնակցությունը օրենսդրական փոփոխությունների կամ բարեփոխումների գործընթացում, սակայն և գործադիր մարմինները, և պատգամավորները օրենսդրական նախաձեռնություն ցուցաբերում են, երբ ոլորտի դերակատարները պարբերաբար ահազանգում են կուտակված խնդիրների և դրանց լուծման համար բավարար օրենսդրական դաշտի անկատարության մասին: Բացի այդ, առկա է նաև փորձագետների ինստիտուտը, որն, ուսումնասիրելով դաշտը, կարող է կառավարությանը առաջարկություններ ներկայացնել օրենսդրական այս կամ այն փոփոխությունը

կատարելու համար: Մասնավորապես «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը մշակվել է միջազգային և տեղական մի շարք փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում ձևավորված և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ռազմավարության» (2004թ.) հիման վրա: Այս առումով օրենսդրական դաշտի ուսումնասիրման ու վերլուծության հիման վրա կարելի է առաջարկել օրենսդրական մի շարք փոփոխություններ, լրացումներ և լրամշակումներ:

2. Ենթաօրենսդրական ակտերի՝ ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, պետական կառավարման լիազոր մարմինների հրամանների առկայությունը

Միայն այս ենթաօրենսդրական ակտերի շնորհիվ է, որ հնարավոր է պետական ուսումնական հաստատության կանոնադրական խնդիրների լուծման համար այս կամ այն գործողության իրականացումը: Ընդ որում ՀՀ կառավարության, պետական կառավարման լիազոր մարմինների, մարզային իշխանությունների և համայնքների լիազորությունները ենթաօրենսդրական փաստաթղթեր ընդունելու առումով, մասնավորապես կրթության ոլորտում, կարգավորվում են օրենքով: ՀՀ իրականության մեջ տվյալ ոլորտին կամ բնագավառին առնչվող ենթաօրենսդրական ակտերը մշակում և մյուսների հետ համաձայնեցնում է այդ ոլորտի պետական լիազորված մարմինը կամ, ավելի հազվադեպ, երկու կամ ավելի լիազոր մարմինները: Այնուհետև, սահմանված կարգով, դրանք կամ ընդունվում են լիազոր մարմնի կողմից կամ որպես ներքին օգտագործման ակտ, կամ հրաման՝ տվյալ ոլորտի համար, կամ կառավարության որոշում՝ լիազոր մարմնի ներկայացմամբ: Ինչպես նախորդ օրենսդրական գործընթացների իրականացման դեպքում, այստեղ էլ համապատասխան փաստաթղթերի մշակման գործընթացում մեծ դեր ունեն ոլորտի փորձագետները, նաև պետական կառավարման լիազոր մարմինների համապատասխան ստորաբաժանումների մասնագետները, որոնք հաճախ համագործակցում են ոլորտի փորձագետների

հետ: Նման իրավիճակում սովորաբար ծնվում են ոլորտի շահերից բխող ենթաօրենդրական ակտեր, ինչը շատ կարևոր է հետագա քայլերն արդյունավետ կատարելու համար:

3. Մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի ներդրումը ՄԿՈՒ համակարգ ՀՈՒԱ-ների ներգարվվելու համար

«Ի՞նչ մասնագիտություն ընտրել» հարցրադրումն անխուսափելի է, որի պատասխանը փնտրում է յուրաքանչյուր մարդ իր տարիքային կամ սոցիալական զարգացման ինչ-որ մի փուլում: Հարցի լուծումը շատ կարևոր է ոչ միայն իր անձի, այլև, ընդհանուր առմամբ, հասարակության համար: Մասնագիտական կողմնորոշումը ենթադրում է մանկավարժության և հոգեբանության շրջանակներից դուրս, առավել ընդգրկուն համալիր աշխատանքներ՝ ուղղված մասնագիտության ընտրությանը:

Համաձայն ընդունված սահմանման[12]՝ մասնագիտական կողմնորոշումը գործառույթ է, որի նպատակն է անձին տրամադրել համակարգված տեղեկատվություն աշխատաշուկայի առկա իրավիճակի և զարգացման միտումների, կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների, մասնագիտությունների, անձնային որակների և հակումների վերաբերյալ՝ նրան հնարավորություն ընձեռելով կայացնել գիտակցված և արդյունավետ որոշում: Մասնագիտական կողմնորոշման իրականացման սկզբունքները պայմանավորված են անձի կարիքներով: Այդ կարիքներից է բխում մասնագիտական կողմնորոշման իրականացման մի շարք մեթոդների կիրառումը, որոնց թվին են պատկանում մասնագիտական իրազեկումը, մասնագիտական հետազոտումը, մասնագիտական խորհրդատվությունը, մասնագիտական ընտրությունը, մասնագիտական դաստիարակությունը և այլն:

Ներկայում վերոգրյալ գործընթացների մեթոդական ապահովումը պետք է իրականացվի «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի» կողմից, որի առաքելությունն է ներդնել ՀՀ ողջ կյանքի ընթացքում անձի մասնագիտական կողմնորոշման գործուն համակարգ, ապահովելով ողջ կյանքի ընթացքում

[12] www.mycareer.am

տարիքային տարբեր խմբերում և սոցիալ-աշխատանքային տարբեր իրավիճակներում գտնվող անձանց մասնագիտության արդյունավետ ընտրության, փոփոխության և կարիերայի շարունակական զարգացման հնարավորությունները՝ նկատի ունենալով մարդու անձնային հատկանիշները, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջարկի փոփոխվող իրավիճակը[5]:

Այդ առումով Կենտրոնի գործունեության հիմնական նպատակներից են՝

- մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովումը
- մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստումը և որակավորման բարձրացումը:

Իր նպատակներին համահունչ՝ Կենտրոնը կարող է իրականացնել մի շարք գործառույթներ, որոնցից քննարկվող խնդրի տեսանկյունից առավել հետաքրքրություն են ներկայացնում հետևյալները.

1) մշակում է մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության իրականացման մեթոդաբանությունը,

2) նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ներդնելու նպատակով մշակում է անձի ինքնագնահատման, կարիերայի պլանավորման, ձեռներեցությամբ սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատաշուկա մուտք գործելու համար հիմնական կարողությունների զարգացմանն ուղղված ուսումնական ծրագրեր,

3) մշակում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգում կրթության համակարգից դուրս մասնագիտության, աշխատանքի և զբաղմունքի հարցերում հստակ կողմնորոշում չունեցող, վերամասնագիտացման ու վերաորակավորման, աշխատաշուկայի արագ փոփոխվող պայմաններին հարմարվելու կարիք ունեցող անձանց մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանությունը,

4) աջակցում է մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոնների գործունեությանը,

5) կազմում է մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման ուսումնական պլաններ և ծրագրեր,

6) իրականացնում է մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ,

7) անցկացնում է ուսումնաարտադրական պրակտիկա՝ մասնագիտական կողմնորոշման ծառայությունների մատուցման գծով,

8) իրականացնում է հանրային իրազեկման աշխատանքներ,

9) համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների, սոցիալական գործընկերների, հասարակական և այլ կազմակերպությունների, նաև զանգվածային լրատվամիջոցների հետ:

Կենտրոնի գործառույթների շրջանակը բավականին լայն է, ինչը կարող է նրան թույլ տալ էական դերակատար լինել նաև ՄԿՈՒ համակարգում ՀՈՒԱ-ների կողմնորոշելու և հետագայում ներգրավվելու համար: Դրա վկայությունը կարող է հանդիսանալ այն, որ Կենտրոնը մշակել է ՄԿՈՒ ոլորտում ՀՈՒԱ-ների հետ մասնագիտական խորհրդատվության և կողմնորոշման մեթոդաբանությունը, որն սկսել է գործել 2014 թ-ից:

4. ՀՈՒԱ-ների կրթության և ուսուցման կազմակերպման ու իրացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերի՝ պետական կրթական չափորոշիչների (այդ թվում հատուկ մասնագիտական կրթական չափորոշիչների), օրինակելի ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, մոդուլների, դասագրքերի, ուսումնական և ուսումնաօժանդակ ձեռնարկների, ուսումնառության նյութերի, մեթոդական ցուցումների առկայությունը

Այս բաղադրիչի վերոգրյալ տարրերի ուղղակի առկայությունը դեռևս բավարար պայման չի կարող հանդիսանալ ՀՈՒԱ-ների կրթությունը ՄԿՈՒ համակարգում արդյունավետ իրականացնելու համար: Չնայած այն, որ վերջին տարիներին ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի Մասնագիտական

կրթության և ուսուցման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից էական աշխատանքներ են կատարվել ՄԿՈՒ ոլորտի ուսումնեթոդական ապահովման ուղղությամբ, մինչ այժմ էլ այստեղ բաց են մնում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց համար մատչելի մասնագիտական ձեռնարկների, դասագրքերի, ուսուցման անհատական պլանների և այլ ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման ու ներդրման խնդիրները:

5. ՀՈՒԱ-ների կրթության և ուսուցման կազմակերպման ու իրացման համար անհրաժեշտ ՄԿՈՒ համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայության ապահովումը

Առանց այդ բազայի ձևավորման ու ՀՈՒԱ-ների կարիքներին հարմարեցված շենքային պայմանների (թեքահարթակների առկայություն՝ շենքից դուրս և շենքի ներսում, վերելակների առկայություն, սանհանգույցների հարմարեցվածություն), դասասենյակների, կաբինետների, արհեստանոցների, լաբորատորիաների, սպորտդահլիճի հարմարեցվածության, սննդի կազմակերպման վայրի առկայության, խոսք անգամ չի կարող լինել ՀՈՒԱ-ների արդյունավետ մասնագիտական կրթության տրամադրման մասին: Այս առումով ՀՀ ՄԿՈՒ մասնագիտական ուսումնական հաստատությունները շատ խոցելի են: Չնայած որ վերջին տարիներին ձևավորված 12 տարածաշրջանային քոլեջներում, ինչպես նաև առանձին արհեստագործական ուսումնարաններում և քոլեջներում տարբեր ծրագրերի միջոցով իրականացվել են շենքերի հիմնանորոգման կամ վերանորոգման աշխատանքներ, հարստացվել է նրանց նյութատեխնիկական բազան համապատասխան սարքերով, սարքավորումներով, դիդակտիկ նյութերով ու գործիքներով, սակայն ընդհանուր առմամբ ՄԿՈՒ համակարգում հիմնականում հաշվի չեն առնվել կրթության առանձնահատուկ պահանջներ ունեցող անձանց կարիքները:

6. ՀՈՒԱ-ների ՄԿՈՒ մեթոդների տիրապետող, ուսումնական գործընթացի կազմակերպման ու իրականացման փորձ ունեցող մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի առկայությունը

Այս բաղադրիչը նույնպես շատ կարևոր է ՄԿՈՒ համակարգում ՀՈՒԱ-ների արդյունավետ մասնագիտական կրթություն տրամադրելու համար: Նույնիսկ վերոգրյալ բաղադրիչների ապահովման դեպքում այս բաղադրիչի բացակայությունը կամ անկատարությունը կարող է հանգեցնել ողջ գործընթացի խաթարման: Այսօր ՄԿՈՒ համակարգում աշխատում են շուրջ 4.5 հազար դասախոս, արտադրական ուսուցման վարպետ և ուսումնաօժանդակ անձնակազմին պատկանող անձինք: Ինչպես ցույց են տվել մեր ուսումնասիրությունները, նրանցից շատերն անգամ տեղյակ չեն ՆԿ սկզբունքներին, իսկ ստվար մասը չի տիրապետում ՀՈՒԱ-ների հետ աշխատելու առանձնահատկություններին և ուսուցման մեթոդներին: Այս իմաստով անհրաժեշտ կլինեն մեծածավալ վերապատրաստումներ, որոնք նպատակահարմար է իրականացնել հնարավորինս շուտ և պարբերաբար: Առաջին հերթին դա պետք է իրականացնել առանձին, հատկապես տարածաշրջանային քոլեջների մանկավարժական անձնակազմի համար, որտեղ արդեն այդ համակազմը որոշակի փորձ ունի ՀՈՒԱ-ների հետ ուսուցման գործընթացներ իրականացնելու առումով: Բացի այդ, անհրաժեշտ է նոր հաստիքների՝ հատուկ մանկավարժի, սոցիալական աշխատողի, հոգեբանի և այլ հաստիքների ներմուծում ՄԿՈՒ համակարգ:

7. Կարիերայի կենտրոնների ստեղծումը ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում

Մինչ այժմ էլ կան տարբեր մոտեցումներ այդ կենտրոնների նպատակի և գործառույթների վերաբերյալ: Ըստ Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի՝ ՄԿՈՒ համակարգում մասնագիտական կողմնորոշման աշխատանքները պետք է կրեն շարունակական բնույթ և իրականացվեն կարիերայի կենտրոնների միջոցով: Կարիերայի կենտրոնները պետք է համալրված լինեն անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, ունենան շահառուների հետ համապատասխան աշխատանքի մեթոդաբանություն, կարիերայի ուղղորդման գծով վերապատրաստված մասնագետներ: Այդ իսկ մոտեցմամբ, վերոգրյալ կենտրոնն իրականացնում է մի ծրագիր, որն ուղղված

մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոնների մեթոդաբանության ապահովմանը, կադրերի վերապատրաստմանը և հանրային իրազեկմանը: Նպատակահարմար է, որ կարիերայի կենտրոնները պետք է նաև համապատասխան աշխատանքներ տանեն հաշմանդամություն ունեցող անձանց հետ, իմանան նրանց ուսուցման և աշխատանքային գործունեության առանձնահատկությունները, կարողանան կապ պաշտպանել գործատուների, շրջանավարտների հետ, ստեղծեն դիմորդների, նրանց կարիքների, ուսանողների, շրջանավարտների, նրանց մասնագիտական առաջխաղացման և գործատուների մասին տվյալների բազա ու հետադարձ կապի հնարավորություն:

Որոշ ՄԿՈՒ հաստատություններում վերջին տարիներին ստեղծվել են կարիերայի կենտրոններ, սակայն դրանք արդյունավետ մեթոդական ապահովման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման, աշխատաշուկայի, կարիերայի պլանավորման վերաբերյալ արդիական տեղեկատվության կարիք ունեն:

8. ՄԿՈՒ համակարգում ուսուցում կամ կրթություն ստացած ՀՈՒԱ-ների զբաղվածությունը ապահովող համակարգի ստեղծումը

Դա կարող է կարգավորվել ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական ծրագրերով՝ ներառյալ զբաղվածության գործակալության կողմից պատվիրված մասնագիտական ուսուցմամբ, ինչը կարող է ապահովվել համապատասխան ենթաօրենսդրական ակտերով («Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման կարգ» և «Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրման կարգ»): Մյուս կողմից մասնագիտական կրթություն ստացած, դրա արդյունքում զբաղվածություն ունեցող և բարեկեցիկ կյանք ունեցող ՀՈՒԱ-ն արդեն իսկ լավ օրինակ և խթան է մնացած, մասնագիտական կրթություն չունեցող ՀՈՒԱ-ների համար ՄԿՈՒ

համակարգ ընդունվելու և համապատասխան ուսուցում կամ կրթություն ստանալու համար:

Սոցիալական ձեռնարկությունների ստեղծումը ՄԿՈՒ հաստատություններում

Սոցիալական ձեռնարկությունը կազմակերպության մի տեսակ է, որի ստեղծման նպատակն է լուծել սոցիալական որևէ խնդիր՝ տվյալ խնդրի լուծման մասշտաբները ընդլայնելու և կայունությունն ապահովելու համար, հաճախ նորարարական լուծումների միջոցով՝ ստեղծելով լրացուցիչ եկամուտ և նույնիսկ շահույթ: Թեև բազմաթիվ սոցիալական ձեռնարկություններ ստեղծվում են ակտիվ անհատների կողմից, ովքեր ձեռնարկատիրությունը դիտարկում են որպես խնդրի լուծման հնարավորություն, սակայն, միշտ չէ որ այդպես է:

Ըստ ստեղծման հիմքերի՝ առանձնացվում են սոցիալական ձեռնարկության հետևյալ տեսակներ.

- Պետական հատվածի/ՏԻՄ կառույցների կողմից ստեղծվող սոցիալական ձեռնարկություններ. երբ որևէ պետական մարմին որոշում է օգտագործել սոցիալական ձեռնարկատիրության մոտեցումը՝ գոյություն ունեցող խնդիրը լուծելու համար. կազմակերպությունը կարող է ունենալ անկախ կամ կիսանկախ կառուցվածք և գործել որպես սոցիալական ձեռնարկություն:
- ՀԿ-ների կողմից ստեղծվող սոցիալական ձեռնարկություններ. բազմաթիվ երկրներում հասարակական կամ ոչ առևտրային կազմակերպություններին արգելվում է ձևավորել որևէ եկամուտ (սովորաբար բացառությամբ անդամավճարների): Նման դեպքերում, ՀԿ-ները կարող են հիմնել մասնավոր ընկերություններ՝ իրենց հիմնական առաքելությունը իրականացնելու նպատակով:
- Որպես անկախ ընկերություններ ստեղծվող սոցիալական ձեռնարկություններ. սա սոցիալական ձեռնարկության ամբողջովին «մասնավոր հատվածի» մոդել է, որը դիտվում է որպես պետական որևէ մարմնի կամ ոչ առևտրային կազմակերպության հետ ուղղակի իրավակազմակերպչական հարաբերություն չունեցող կազմակերպություն:

- Սոցիալական ձեռնարկության լրացուցիչ տեսակ է համարվում որոշակի վայրում ստեղծված ձեռնարկության ընդլայնումը կամ տվյալ բիզնես հայեցակարգի տարածումը մեկ այլ քաղաք:

<u>Վերոհիշյալ դասակարգման հիման վրա սոցիալական ձեռնարկությունը կարող է ունենալ հետևյալ կառուցվածքային դիրքը.</u>

- Մայր կազմակերպության կառուցվածքում. այս դեպքում սոցիալական ձեռնարկությունը կազմում է մայր կազմակերպության կառուցվածքի մի մաս և հաճախ չունի առանձին անուն, ապրանքանիշ և այլն: Մայր կազմակերպությունը կարող է (կամ պարտավոր է՝ կախված տեղական օրենսդրության պահանջներից) գրանցել շահույթ հետապնդող ձեռնարկությունը որպես առանձին սուբյեկտ: Ծրագրային և կառուցվածքային տեսանկյունից այն կարող է ամբողջովին հանդիսանալ մայր կազմակերպության մի մաս, իսկ սոցիալական ձեռնարկությունը կրի նախագծի կարգավիճակ՝ սեփական տնօրենով, թիմով և այլն: Սոցիալական ձեռնարկությունն այս դեպքում չունի առանձին ռազմավարություն կամ գործողության ծրագիր, և դրանք մշակվում են մայր կազմակերպության ռազմավարության և տեսլականի շրջանակներում: Այն հաճախ նաև ֆիզիկապես է գտնվում մայր կազմակերպության հետ միևնույն տարածքում: Օրինակ՝ Երևանի Ինֆորմատիկայի պետական քոլեջը հիմնադրել է լազերային տպագրության ծառայություն, որը գործում է որպես ՀՈՒԱ-ների համար աշխատատեղեր ապահովող սոցիալական ձեռնարկություն: Այնուամենայնիվ, այս դե ֆակտո սոցիալական ձեռնարկությունը գրանցված չէ որպես առանձին սուբյեկտ և ունի քոլեջի շրջանակներում գործող դիզայնի և տպագրության լաբորատորիայի կարգավիճակ: Այն չունի առանձին բյուջե և քանի որ գտնվում է պետության կողմից ֆինանսավորվող քոլեջի կառուցվածքում, ունի որոշակի սահմանափակումներ՝ գործունեության, եկամուտի ձևավորման, այն ծախսելու և այլ տեսանկյուններից: Սակայն, միևնույն ժամանակ, այս կառուցվածքի շնորհիվ քոլեջը կրում է ավելի քիչ ռիսկեր և իրավական

պարտավորություններ և վարում է համայնքի վրա դրական սոցիալական ազդեցություն գործող ծառայություն: Ձեռնարկության ընդլայնմանը դեպքում քոլեջը կարող է այն գրանցել որպես առանձին սուբյեկտ՝ եկամուտների հոսքն ավելացնելու և հաճախորդների բազան դիվերսիֆիկացնելու նպատակով:

- Մայր կազմակերպությունից կիսանկախ կարգավիճակ. այս դեպքում սոցիալական ձեռնարկությունը դիտարկվում է որպես իր սեփական թիմով գործող առանձին սուբյեկտ: Սակայն մայր կազմակերպությունը հաճախ սերտորեն համագործակցում է դուստր ընկերության հետ՝ կա՛մ որոշումների կայացման գործընթացում՝ որպես խորհրդի անդամ, կա՛մ այլ եղանակներով. օրինակ՝ որպես դուստր ընկերության հիմնական պատվիրատու:
- Լիովին անկախ կամ առանց մայր կազմակերպության գործող սոցիալական ձեռնարկություններ. այս դեպքում ընկերությունը լիովին անկախ է իր սեփական ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը մշակելու գործում, կամ այն պատճառով, որ նրան տրվել է մայր կազմակերպությունից լիովին անկախ գործելու արտոնություն, կամ քանի որ այն չունի մայր կազմակերպություն:

Կարևոր է, որպեսզի սոցիալական ձեռնարկությունը խնդրի լուծման իր տարբերակներն առաջարկելիս գործի էթիկայի կանոններին համապատասխան՝ խուսափելով այդ գործընթացում նոր սոցիալական խնդիրներ ստեղծելուց: Երկրորդ. սոցիալական ձեռնարկությունները չպետք է անտեսեն հասարակության առջև ծառացած այլ հարցեր թիրախային խնդրի լուծումներ փնտրելիս:

<u>Սոցիալական կազմակերպության գործունեության էթիկայի ապահովման համար կարևոր են հետևյալ սկզբունքները.</u>

- հնարավորություններ տնտեսապես խոցելի արտադրողների համար,
- թափանցիկություն և հաշվետվողականություն,
- արդար առևտրի պրակտիկա,
- արդար գնի վճարում,

- մանկական աշխատուժի և հարկադիր աշխատանքի բացառում,
- խտրականության բացառում,
- համապատասխան աշխատանքային պայմանների ապահովում,
- կարողությունների հզորացում,
- արդար առևտրի խթանում,
- շրջակա միջավայրի պահպանում (Սոցիալական ձեռնարկատիրություն, 2016):

9. ՀՈՒԱ-ների նկատմամբ հասարակության, մասնավորապես գործատուների մեջ արմատացած կարծրատիպերի վերաբերմունքի ու կանխակալ վերաբերմունքի փոփոխությանն ուղղված միջոցառումների համակարգի մշակումն է, որի կիրառման արդյունքում կմեծանա ՀՈՒԱ-ների ներգրավումը ՄԿՈՒ համակարգ և աշխատաշուկա:

Վերոգրյալ համակարգի մեջ պետք է նախատեսել այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են հանրային քննարկումները, տեղեկատվությունը ԶԼՄ-ներով, աշխատանքի տոնավաճառները, մշակութային միջոցառումները, այլն:

10. Արտաքին շահեկիցների՝ ՀՈՒԱ-ների և նրանց ծնողների հետ տարվող աշխատանքը՝ ՄԿՈՒ հաստատություններում ՆԿ ստանալու առավելությունները և հնարավորությունները մատնանշելու, ինչպես նաև ուսումնական գործընթացի հետ առնչվող բոլոր խնդիրները թափանցիկ դարձնելու առումով:

Այսպիսով՝ ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներդրման, ՀՈՒԱ-ների ներգրավման և հետագա զբաղվածության ապահովման մոդելը պետք է ունենա հետևյալ, իրար փոխկապակցված ոլորտների բաղադրիչները.

1. Իրավական դաշտի ապահովում՝
   - օրենսդրական բարեփոխումներ (ՀՀ Ազգային ժողով)
   - ենթաօրենսդրական բարելավված ակտեր (ՀՀ կառավարություն, նախարարություններ):
2. Մասնագիտական կողմնորոշման համակարգի ձևավորում՝

- մասնագիտական կողմնորոշման մեթոդոլոգիայի մշակում (Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն)
- մասնագիտական կողմնորոշման ենթակառուցվածքների առկայություն (Զբաղվածության տարածքային կենտրոններ):

3. ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում՝

   3.1. Ուսումնամեթոդական ապահովում

   3.2. Նյութատեխնիկական բազայի հարստացում և հարմարեցում

   3.3. Մարդկային ռեսուրսների զարգացում

   - մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմերի պարբերաբար վերապատրաստումներ՝ հետադարձ կապի ապահովման հիման վրա
   - նոր հաստիքների ներմուծում ՄԿՈՒ համակարգ

   3.4.Կարիերայի կենտրոնների ստեղծում

   - ենթակառուցվածքների ձևավորում
   - տվյալների բազայի ստեղծում
   - հետադարձ կապի ապահովում:

   3.5. Սոցիալական ձեռնարկությունների ստեղծում:

4. Զբաղվածության ապահովման համակարգի ձևավորում

   - գործատուների հետ համագործակցության մեխանիզմների մշակում
   - պետական ծրագրերի ներդնում
   - իրազեկության բարձրացում
   - ձեռներեցության խթանում:

5. Հասարակության մեջ ՀՈՒԱ-ների մասին կարծատիպերի և կանխակալ վերաբերմունքի փոփոխությանը միտված ծրագրերի մշակում և իրականացում՝ ՄԿՈՒ հաստատությունների, ԶԼՄ-ների, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների փոխադարձ համագործակցությամբ ու մասնակցությամբ:

6. Արտաքին շահակիցների մասին տվյալների բազայի ձևավորում:

Վերոգրյալ բաղադրիչների հաջորդականությունն ու փոխկապվածությունը սխեմատիկորեն բերված է ստորև ներկայացված գծապատկերում:



Գծապատկեր. ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներդրման, ՀՈՒԱ-ների ներգրավման և հետագա զբաղվածության ապահովման մոդելի սխեմատիկ պատկերումը

ՄԿՈՒ համակարգում ՆԿ համակարգի ներդրումն ապահովող օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ

ՄԿՈՒ տրամադրելու հիմնախնդիրների լուծման ու խոչընդոտները հաղթահարելու համար ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներդրման, ՀՈՒԱ-ների ներգրավման և հետագա զբաղվածության ապահովման մոդելի կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ են մի շարք նախնական գործողություններ: Մասնավորապես.

1. ՆԿ կազմակերպման ու արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ օրենսդրության ձևավորման համար առաջարկվում է՝

1.1. Մշակել ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներմուծման նպատակային «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասնագիտական կրթություն և ուսուցման համակարգի 2018-2022 թթ. զարգացման ծրագիրը» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):

1.2. Լրամշակել «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝

- Հոդված 12-ի մաս 2-ը՝ հետևյալ խմբագրությամբ. «Կրթության բոլոր ձևերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը: Կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար կարող են սահմանվել արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հատուկ պետական կրթական չափորոշիչներ» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):

- Հոդված 14-ի մաս 6-ը՝ հետևյալ խմբագրությամբ. «Հեռակա, հեռավար (դիստանցիոն) ձևերով նախնական մասնագիտական (արհեստագործական), մասնագիտական միջին և բարձրագույն կրթության կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորած մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):
- Հոդված 15-ի մաս 4-ը՝ հետևյալ խմբագրությամբ. «Նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և պետական և ոչ պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքով: Նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդների ընդունելության արտոնությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):
- Հոդված 26-ի մաս 1-ը հետևյալ խմբագրությամբ՝ «Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են քաղաքացիների և հասարակության կրթական պահանջմունքների բավարարման նպատակով: Մասնագիտական կրթության յուրաքանչյուր մակարդակի շրջանակում լրացուցիչ կրթության հիմնական խնդիրն անձի կրթական պահանջմունքների բավարարումը և մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացումն է» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):
- Հոդված 49-ի մաս 5-ը հետևյալ խմբագրությամբ՝ «Կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար մասնագիտական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում

է բարձրացված չափաքանակներով» (կատարողներ՝ ՀՀ ԿԳՆ, ՀՀ ֆինանսների նախարարություն):

1.3. Լրամշակել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի մաս 3-ը հետևյալ խմբագրությամբ՝ «Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան» (կատարողներ՝ ՀՀ ԿԳՆ և ՀՀ ֆինանսների նախարարություններ) :

- Լրամշակել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի Հոդված 7-ի մաս 1-ը՝ հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ: Պետական հատուկ կրթական չափորոշիչների մշակման, հաստատման և ներդրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):
- Լրամշակել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի Հոդված 8-ի մաս 3-ը հետևյալ խմբագրությամբ՝ «Արհեստագործական կրթության արհեստավորի որակավորման աստիճան ստանալու համար հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը 6 ամսից մինչև 3 տարի է: Կառավարության որոշմամբ կարող է սահմանվել արհեստագործական կրթական ծրագրով իրականացվող կրթության այլ հիմք և ուսուցման

տնողություն, այդ թվում և կրթության հատուկ պահանջներ ունեցող անձանց համար» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն):

- Լրամշակել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի Հոդված 18-ի մաս 1-ը հետևյալ խմբագրությամբ՝ «Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենքներին, սույն օրենքին, այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան՝

  1) ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի՝ իրականացնում է ուսանողների և ունկնդիրների ընդունելությունը, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներով.

  2) ապահովում է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը.

  3) իրականացնում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր.

  4) աջակցում է ուսանողական ինքնակառավարմանը, ուսանողների մասնակցությանը ուսումնական հաստատության կողմից իրականացվող ծրագրերում.

  5) իրականացնում է մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր,

  6) իրականացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ներառական կրթության սկզբունքով» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):

1.4. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը լրացնել նոր հոդվածներով՝

- «Մասնագիտական ուսումնական հաստատությունը կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսանողների, նրանց ծնողների, մանկավարժական աշխատողների և տվյալ ուսումնական հաստատությունում կրթական գործընթացին մասնակից այլ անձանց համար ապահովում է կրթությանն օժանդակող խորհրդատվական ծառայություններ՝ տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլն: Մասնագիտացված կրթական աջակցության ձևերի կազմակերպման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):
- «Մասնագիտական ուսումնական հաստատությունն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ» (կատարողներ՝ ՀՀ ԿԳՆ, ՀՀ առողջապահության նախարարություն):
- «Ուսանողների առողջության պահպանման և ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելելու, վերականգնելու նպատակով յուրաքանչյուր ուսանող տարին առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ պետական բյուջեի միջոցների հաշվին» (կատարողներ՝ ՀՀ ԿԳՆ, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն):
- «Ուսանողի ծնողն իրավունք ունի համագործակցելու մասնագիտական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):

1.5. «ՀՈՒԱ-ների իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծում՝

- Հոդված 4-ը լրացնել նոր ենթակետով՝ հետևյալ ձևակերպմամբ. «10) ՀՈՒԱ-ների (երեխաների) հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերում ներգրավվածությունը» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):
- Հոդված 10-ի 2-րդ մասում կատարել լրացում հետևյալ խմբագրմամբ՝ «2. Շահագործված շենք-շինությունները (այդ թվում՝ կրթական, մշակութային և մարզական), անկախ սեփականության ձևից, ենթակա են հարմարեցման ՀՈՒԱ-ներիհամար: Այն դեպքերում, երբ հնարավոր չէ ապահովել համընդհանուր դիզայնը, ապա ապահովվում է օժանդակ հարմարանքների կիրառումը ՀՈՒԱ-ների որոշակի խմբերի համար՝ դրանք առավելագույնս օգտագործելի դարձնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով» (կատարողներ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ ԿԳՆ):
- Հոդված 10-ի 2-րդ մասի վերջին նախադասությունը տանել «Եզրափակիչ դրույթների» մեջ հետևյալ ձևակերպմամբ՝ «Սույն օրենքի հոդված 4-ի 2-րդ մասով նախատեսված դրույթը կիրականացվի փուլերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներով» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):
- Հոդված 12-ի 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «2. Կրթության բնագավառում լիազորած մարմինը ՀՈՒԱ-ների (երեխաների) համար ապահովում է՝

  ա/ ներառական, հասանելի և մատչելի կրթություն՝ կրթության բոլոր մակարդակներում և բոլոր կրթական ծրագրերով ու ձևերով,

  բ/ մասնակցությունը ցկյանս ուսումնառության ոլորտում իրականացվող գործընթացներին» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):
- Հոդված 12-ի 8-րդ մասը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված հիմքերով պետական

բարձրագույն, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող 1-ին կամ 2-րդ խմբի ՀՈՒԱ-ները կամ հաշմանդամություն ունեցող երեխաները կրթության բնագավառում լիազոր մարմնի կողմից սահմանած կարգով տեղափոխվում են ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքում չեն ճանաչվել հաշմանդամություն ունեցող անձ (երեխա)» (կատարողներ՝ ՀՀ ԿԳՆ, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն) :

- Հոդված 12-ի 9-րդ մասը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «9. Պետական բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորողները, ուսումնառության ընթացքում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձի կամ հաշմանդամություն ունեցող երեխա ճանաչվելու դեպքում կրթության բնագավառում լիազոր մարմնի կողմից սահմանած կարգով տեղափոխվում են ուսումնական հաստատության անվճար ուսուցման համակարգ» (կատարող՝ ՀՀ ԿԳՆ):
- Հոդված 16-ի 2-րդ մասի 4 և 5 ենթակետերը միավորել հետևյալ խմբագրությամբ՝ «4. վերապատրաստման, որակավորման բարձրացման և վերաորակավորման դասընթացների միջոցով նոր կարողությունների ու հմտությունների զարգացում, ինչպես նաև վերամասնագիտացում» (կատարողներ՝ ՀՀ ԿԳՆ, ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարություն):
- Հոդված 22-ի 2-րդ մասում կատարել լրացում հետևյալ խմբագրությամբ՝ «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում գտնվող և տնային պայմաններում սպասարկվող ՀՈՒԱ-ների

(երեխաներին) տրամադրվում են կենցաղային սպասարկման և կրթական ծառայություններ, առաջնային բժշկական օգնություն և սոցիալ-հոգեբանական ու իրավաբանական խորհրդատվություն» (կատարողներ՝ ՀՀ ԿԳՆ, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն) :

2. ՆԿ կազմակերպման ու արդյունավետ իրականացման համար նպատակահարմար է, որ
   - ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակվի ՄԿՈՒ համակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց օգնականի ծառություններից օգտվելու կարգը: Նպատակահարմար է նաև, որ ՆԿ իրականացնող ՄԿՈՒ հաստատություններում նախատեսել ՆԿ իրականացնելու համար անհրաժեշտ հոգեբանի, հատուկ մանկավարժների, սոցիալական աշխատողի և այլ հաստիքներ:
   - ՀՀ ԿԳՆ կողմից մշակվի «ՄԿՈՒ համակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների ծնողների (այլ օրինական ներկայացուցիչների) անհատական ուսումնական ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացում մասնակցության կարգը» /կամ երաշխավորություններ/:
   - ՀՀ ԿԳՆ կողմից մշակվի «Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների ծնողների ուսումնական պարապմունքների մասնակցության կարգը**»:**
   - ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակվի «Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ներառական կրթության և տնային ուսուցման ձևով կրթության իրականացման կարգը»:
   - ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակվի «Պետական հատուկ կրթական չափորոշիչների մշակման, հաստատման և ներդրման կարգը» և

ներկայացվի ՀՀ կառավարություն հատատման, իսկ հատուկ պետական կրթական չափորոշիչների մշակմանը գործընթացն իրականացվի Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից:

- ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակվի «Առողջական վիճակի պատճառով ՄԿՈՒ ուսումնական հաստատություններ ժամանակավորապես կամ մշտապես հաճախել չկարողացող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար տնային ուսուցման կազմակերպման կարգը»:
- ՀՀ ԿԳՆ-ի և ՀՀ առողջապահության նախարարության կողմից համատեղ մշակվի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը»:
- ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակվի «ՄԿՈՒ համակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման պայմանագրի տիպային ձևը»:
- ՀՀ ԿԳՆ-ին մշակել «ՄԿՈՒ համակարգում անհատական ուսումնական պլանների մշակման ու կիրարկման կարգը»:
- ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակվի «Ներառական կրթության իրականացման երաշխավորություններ /կարգ/ ՄԿՈՒ համակարգում», որտեղ կսահմանվեն նաև ՆԿ իրականացնելու համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմանները:
- ՀՀ ԿԳՆ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համատեղ մշակվի և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության ապահովման ֆինանսավորման բարձրացված չափաքանակի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:
- ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակվի և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվի «Նախնական (արհեստագործական) մասնագիտական

կրթության և վարպետային ուսուցման այն մասնագիտությունների ցանկը, որոնք կարող են կազմակերպվել տնային պայմաններում» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

- ՀՀ ֆինանսների նախարարության և ԿԳՆ-ի կողմից համատեղ մշակվի և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպող ՄԿՈՒ դասախոսների աշխատանքի վարձատրության արտոնյալ պայմանների հաշվարկման կարգի» նախագիծը:
- ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակվի և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացվի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար առանձին մարզական պարապմունքներ իրականացնելու կարգի» նախագիծը:
- ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակվի «Անհատական ուսումնական պլանների մշակմանը և գնահատման գործընթացում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների ծնողների մասնակցության օրինակելի կարգ», որի հիման վրա ՄԿՈՒ հաստատություններից յուրաքանչյուրը կարող է այն տեղայնացնել:
- Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի կողմից մշակվի ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների կարիերայի կենտրոնների գործառույթների մասին երաշխավորություններ և տրամադրվի ՄԿՈ ուսումնական հաստատություններին:

Վերոգրյալ նորմատիվ ակտերի մշակումը, հաստատումը և կիրարկումը թույլ կտա «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներն առավել լիարժեք կիրառել ՄԿՈՒ համակարգում ՀՈՒԱ-ների կրթությունը և ուսուցումն արդյունավետ իրականացնելու գործընթացում:

3. ՀՈՒԱ-ների ՄԿՈՒ հաստատություններում սովորելու նպատակով մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական գործընթացների կարգավորման համար նպատակահարմար է իրականացնել՝

- ՄԿՈՒ համակարգ ուղղորդող մասնագիտական կողմնորոշման հայեցակարգի մշակում, դրա հիման վրա ձևավորված մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդնում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, Զբաղվածության պետական ծառայության գործակալությունում, դրան մասնակից դարձնելով նաև ոչ պետական կազմակերպություններին,
- ՀՈՒԱ-ների մասնագիտական կողմնորոշման կարիքների գնահատում, դրանք մասնագիտական կողմնորոշման գործընթացների և մեթոդաբանության մեջ ներգրավում,
- ՀՈՒԱ-ների ՄԿՈՒ համակարգ ներառվելու համար մասնագիտական կարողությունների (ներառյալ հոգեֆիզիոլոգիական) որոշման մեթոդոլոգիայի մշակում և ներդնում մասնագիտական կողմնորոշման գործընթացներում,
- ՀՈՒԱ-ների մոտիվացիայի զարգացմանն ուղղված համալիր ծրագրի իրականացում՝ գործոնների հետազոտման և գործողությունների պլանի մշակման ճանապարհով,
- ՆԿ իրականացման հնարավորության ու դրա պայմանների իրազեկում ՄԿՈՒ հաստատությունների կողմից անցկացվող մասնագիտական կողմնորոշման (գովազդի) աշխատանքներում,
- ՀՈՒԱ-ների հաշվառման համակարգի բարելավում:

4. Նպատակահարմար է մշակել համալիր միջոցառումների պլան (հայեցակարգ կամ ռազմավարություն՝ համապատասխան միջոցառումների ժամանակացույցով)՝ համաձայն որի կիրականացվեն գործողություններ ուղղված՝

- ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներդրման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բազայի ապահովմանը,

- համակողմանի վերապատրաստված ու մասնագիտական պատրաստվածություն ունեցող դասավանդող անձնակազմի ձևավորմանը,
- կրթական գործընթացում ծնողների ներգրավմանը:

Այստեղ շատ կարևոր է առավելագույնս հստակեցնել այն ֆիզիկական և նյութատեխնիկական չափանիշները, որոնց պետք է համապատասխանի ուսումնական հաստատությունը ՆԿ-ը կազմակերպելիս ու իրականացնելիս: Կարևոր է նաև ՀՈՒԱ-ների և դասավանդող անձնակազմի կարիքների գնահատման գործընթացի կազմակերպումը՝ մշակելով այդ կարիքների գնահատման մեխանիզմները և կատարելագործելով գնահատման, նաև հետադարձ կապի մեթոդներն ու գործիքները, որոնց կիրառման արդյունքում ունկնդիրների մոտ կձևավորվեն գործնական գիտելիքներ և կարողություններ: Այս գործընթացում կարևոր է ներառական կրթությանն առնչվող գրականության հասանելիության ապահովումը ուսումնական հաստատությունների, մասնագետների և ունկնդիրների շրջանում (կատարողներ՝ ՀՀ ԿԳՆ, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության, ՀՀ առողջապահության, ՀՀ ֆինանսների, ՀՀ քաղաքաշինության նախարարություններ):

5. Հաշվի առնելով ՄԿՈՒ համակարգում ՆԿ ֆինանսավորման առանձնահատկությունները՝ նպատակահարմար է ճշգրիտ հաշվարկել պետական բյուջետային ներդրումների չափը և համընդհանուր ներառականության հնարավորությունը բոլոր ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում: Այս դեպքում չպետք է գնալ միայն ֆինանսական միջոցներ խնայելու ուղղությամբ, այլ առաջնային տեղում պետք է լինի որակյալ կրթության ապահովումը: Առավել նպատակահարմար կլինի ՆԿ իրականացումը սկսել տարածաշրջանային, ինչպես նաև առանձին, համապատասխան պայմաններ ու որոշակի փորձ ունեցող ՄԿՈ հաստատություններում, իսկ մյուս ՄԿՈ հաստատություններում առայժմ տարածել ՀՈՒԱ-ների կրթության կազմակերպման ինտեգրատիվ

մոտեցումները (ՀՀ ԿԳՆ, ՀՀ ֆինանսների, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություններ):

6. Նպատակահարմար է մշակել և կիրարկել ՆԿ էության և հիմնական նպատակների մասին տեղեկացվածության բարձրացման մեխանիզմներ՝ ՄԿՈՒ հաստատությունների, ուսանողների, նրանց ծնողների, այդ թվում նաև ՀՈՒԱ-ների ծնողների, ինչպես նաև գործատուների համար՝ պարբերաբար կազմակերպելով աշխատանքային տոնավաճառներ և ցուցահանդեսներ ՀՈՒԱ-ների մասնակցությամբ: Նպատակահարմար է ընդլայնել համագործակցությունը ՄԿՈՒ հաստատությունների և գործատուների միջև՝ հաշմանդամություն ունեցող անձնանց ուսուցման, արտադրական պրակտիկայի կազմակերպման և աշխատանքի տեղավորման գործընթացներում (ՀՀ ԿԳՆ, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, Զբաղվածության պետական ծառայություն, Գործատուների հանրապետական միություն, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ, այլն):
7. Նպատակահարմար է, որ ՄԿՈՒ համակարգում ՆԿ ներդրման, իրականացման և այլ նախաձեռնությունները մշակվեն հասարակայնորեն բաց և թափանցիկ մթնոլորտում: Արդյունքները ցանկալի է, որ ներկայացվեն հանրային քննարկումներում՝ պետական, հասարակական և միջազգային կառույցների մասնակցությամբ: Հասարակական և միջազգային կառույցները ցանկալի է, որ հատուկ ուշադրություն դարձնեն շահառուների շրջանում ՆԿ վերաբերյալ համապատասխան դիրքորոշումների և ընկալումների ձևավորմանը: Նմանատիպ գործողություններ պետք է կատարեն նաև ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների տնօրինությունները տեղում՝ ամենօրյա աշխատանք կատարելով իրենց ուսանողների ու նրանց ծնողների հետ՝ նպաստելով հանդուրժողական, ընդունող միջավայրի ձևավորմանը:
8. ՀՈՒԱ-ների ուսումնառության որակը և կրթական վերջնարդյունքները բարելավելու նպատակով յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում նպատակահարմար է ձևավորել տարբեր մասնագետներից (հատուկ մանկավարժ, հոգեբան, սուրդոմանկավարժ, էրգոթերապիստ, սոցիալական

աշխատող, այլն) կազմված բազմամասնագիտական անձնակազմ՝ սահմանելով դրա անդամների մասնագիտական որակավորման պահանջները, գործառույթներն ու պարտականությունները, և որը ակտիվորեն կհամագործակցի ուսումնական հաստատության մյուս մանկավարժների և հաշմանդամություն ունեցող ուսանողների ծնողների հետ ուսումնամեթոդական (անհատական ուսումնական պլանների մշակման) և դաստիարակչական աշխատանքների իրականացման գործընթացում: Ցանկալի է նաև այդ բազմամասնագիտական անձնակազմում ներգրավել տեսանելի հաշմանդամություն ունեցող մանկավարժի կամ այլ աշխատողի, ինչը կարող է դրական ու ոգևորիչ օրինակ հանդիսանալ ուսումնառել ցանկացող ՀՈՒԱ-ների համար:

Վերոգրյալ առաջարկությունների հիման վրա իրականացված միջոցառումները, ուղղորդված ՄԿՈՒ համակարգում ներառական կրթության ներդրման, ՀՈՒԱ-ների ներգրավման և զբաղվածության ապահովման մոդելով, թույլ կտան ՀՀ ՄԿՈՒ համակարգում բոլորի համար հավասար հնարավորությունների ստեղծման միջոցով համատեղ ուսուցումից անցում կատարելու դեպի ներառական որակյալ կրթության մատուցմանը առաջիկա տարիների ընթացքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 24.10.2005թ.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի 12 հունվարի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշում:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 ծրագրի նախագիծ
- ՀՈՒԱ-ների զբաղվածության և մասնագիտական կրթությանը վերաբերող ՀՀ օրենսդրության վերլուծություն, ՀՈՒԱ-ների կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE) ծրագիր: 2012 թ.
- ՀՈՒԱ-ների զբաղվածությունը Հայաստանում. Կարիքներ և խոչընդոտներ. Ձեկույց որակական հետազոտության արդյունքների վերաբերյալ: «ՀՈՒԱ-ներիկենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագիր և «Հարավային Կովկասում ականներից տուժածների սոցիալ-տնտեսական վերաինտեգրման ծրագիր», Երևան, 2013թ.
- ՀՈՒԱ-ների հետ աշխատելու ձեռնարկ: Նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական հաստատությունների դասավանդողների համար: «ՀՈՒԱ-ներիկենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագիր: Երևան, 2013թ.
- «ՀՈՒԱ-ների իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծ

- «ՀՈՒԱ-ների իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «ՀՈՒԱ-ների սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին», ընդունվել է 12.01.2017թ ՀՀ կառավարության նիստի արձագրային որոշմամբ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 10.07.2009թ.
- Հանրային կարծիքի հետազոտության վերլուծություն ՀՈՒԱ-ներիզբաղվածության վերաբերյալ: ՀՈՒԱ-ներիկենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE) ծրագիր: Երևան, 2012թ.
- ՀՀ կառավարության 2006 թվականի 3 օգոստոսի «Առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմք չպահանջող նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» N 1151-Ն որոշում
- ՀՀ Կրթության և գիտության նախարարության 2015 թ. գործունեության հաշվետվություն
- «ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում» հետազոտություն: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն: 2013թ.
- ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին (23.06.2011թ.)
- «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք (25.05.2005թ.)
- «Կրթության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 14.04.1999թ.
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 08.07.2005թ.

- Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար: Իրավիճակի նախնական վերլուծություն, 2016
- Սոցիալական ձեռնարկատիրություն. Աշխարհը վերափոխող ձեռնարկությունների ստեղծման և զարգացման ձեռնարկ: Երևան, 2016թ.
- www.mycareer.am
- www.myfuture.edu.au
- www.disabilityarmenia.am
- www.mlsa.am
- www.edu.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՄԿՈՒ հաստատություններում 2015-2016 թթ հաշմանդամություն ունեցող ուսանողների քանակն ըստ հաշմանդամության տեսակների:

	Հաստատության անվանումը	2015-2016 ուս. տարում ընդունված ուսանողների թիվը	2015-2016 ուս. տարում ընդունված հաշմանդա-մություն ունեցող ուսանողների թիվը	2015-2016 ուս. տարում ընդունված ուսանողների հաշմանդամության տեսակը					
				Հենաշարժողական	Մտավոր	Տեսողական	Լսողական	Խոսքային	Այլ
	Ք. Երևան								
1.	Երևանի թ.1 տարածաշրջանային պետական քոլեջ	134	3	-	-	-	-	-	3
2.	Երևանի թ.2 տարածաշրջանային պետական քոլեջ	176	8	2	2	1	3	-	-
3.	Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ	78	0	-	-	-	-	-	-
4.	Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ	53	0	-	-	-	-	-	-
5.	Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ	480	0	-	-	-	-	-	-
6.	Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ	240	4	-	-	2	-	-	2
7.	«Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամ	48	1	-	-	-	-	-	1
8.	Երևանի թ.10 արհեստագործական պետական ուսումնարան	23	1	-	-	-	-	-	-
9.	Ֆրանս-հայկական մասնագիտական ուսուցման կենտրոն	117	0	-	-	-	-	-	-
10.	Հանրապետական թ.2 հատուկ կրթահամալիր	57	14	-	14	-	-	-	-
	Արմավիրի մարզ								
11.	Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ	57	5	-	-	3	1	1	-
12.	Արմավիրի արվեստի պետական քոլեջ	26	0	-	-	-	-	-	-
13.	Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ	142	10	9	-	-	-	1	-
14.	Էջմիածնի պետական քոլեջ	94	3	2	-	-	-	-	1
15.	Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան	33	1	-	-	-	-	-	1
	Կոտայքի մարզ								
16.	Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ	91	0	-	-	-	-	-	-

	Հաստատության անվանումը	2015-2016 ուս. տարում ընդունված ուսանողների թիվը	2015-2016 ուս. տարում ընդունված հաշմանդա-մություն ունեցող ուսանողների թիվը	2015-2016 ուս. տարում ընդունված ուսանողների հաշմանդամության տեսակը					
				Հենաշարժողական	Մտավոր	Տեսողական	Լսողական	Խոսքային	Այլ
17.	Հրազդանի պետական բժշկական քոլեջ	18	0	-	-	-	-	-	-
18.	Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան	28	3	1	1	-	1	-	-
19.	Նոր Գեղիի պետական գյուղատնտեսական քոլեջ	47	0	-	-	-	-	-	-
20.	Չարենցավանի պետական քոլեջ	59	0	-	-	-	-	-	-
21.	Աբովյանի պետական ճարտարագիտական քոլեջ	70	0	-	-	-	-	-	-
22.	Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ	78	0	-	-	-	-	-	-
23.	Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան	21	1	-	-	1	-	-	-
24.	Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարան	80	0	-	-	-	-	-	-
25.	Աբովյանի թ.1 արհեստագործական պետական ուսումնարան	48	0	-	-	-	-	-	-
26.	Աբովյանի թ.2 հատուկ արհեստագործական պետական ուսումնարան	0	0	-	-	-	-	-	-
27.	Աբովյանի կրթահամալիր	46	4	-	-	1	1	-	2
	Արագածոտնի մարզ								
28.	Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ	82	0	-	-	-	-	-	-
29.	Աշտարակի արհեստագործական պետական ուսումնարան	61	0	-	-	-	-	-	-
30.	Արագածի արհեստագործական պետական ուսումնարան	50	0	-	-	-	-	-	-
	Տավուշի մարզ								
31.	Դիլիջանի պետական քոլեջ	70	2	-	-	1	-	-	1
32.	Դիլիջանի արվեստի պետական քոլեջ	14	1	-	-	-	-	-	1
33.	Դիլիջանի պետական բժշկական քոլեջ	110	1	-	-	-	-	-	1
34.	Նոյեմբերյանի պետական քոլեջ	64	6	-	-	2	1	-	3
35.	Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ	73	4	-	-	1	1	-	2
36.	Բերդի պետական քոլեջ	35	2	-	-	-	-	-	2
37.	Բերդի արհեստագործական պետական ուսումնարան	54	10	3	3	-	-	4	-

	Հաստատության անվանումը	2015-2016 ուս. տարում ընդունված ուսանողների թիվը	2015-2016 ուս. տարում ընդունված հաշմանդա-մություն ունեցող ուսանողների թիվը	2015-2016 ուս. տարում ընդունված ուսանողների հաշմանդամության տեսակը					
				Հենաշարժողական	Մտավոր	Տեսողական	Լսողական	Խոսքային	Այլ
Վայոց Ձորի մարզ									
38.	Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջ	128	12	2	1	3	-	2	4
Սյունիքի մարզ									
39.	Կապանի պետական բժշկական քոլեջ	42	1	-	-	-	1	-	-
40.	Կապանի արվեստի պետական քոլեջ	18	0	-	-	-	-	-	-
41.	Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ	118	11	3	8	-	-	-	-
42.	Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան	70	0	-	-	-	-	-	-
43.	Սիսիանի պետական քոլեջ	236	8	2	4	2	-	-	-
44.	Գորիսի պետական քոլեջ	128	8	1	-	2	2	-	3
45.	Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ	88	7	-	1	2	-	-	4
46.	Մեղրու պետական քոլեջ	41	1	1	-	-	-	-	-
	Ընդամենը	3826	132	26	34	21	11	8	32

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԿՈՒ հաստատությունների վարչական և մանկավարժական աշխատակիցների ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ արդյունավետությունը և ներկայացված նյութի բովանդակության կիրառելիությունը ՆԿ համատեքստում ուսուցիչների կողմից տրված գնահատականները

Հարցաշարը	Գնահատականը	2015 թ. հարցմանը պատասխանողների քանակը	2016 թ., հարցմանը պատասխանողների քանակը
Դասընթացը համապատասխանում էր ուսուցիչների ակնկալիքներին	Բավարար չափով	5	10
	Ամբողջությամբ՝	90	109
	Գերազանցել է ակնկալիքները	45	47
Ներկայացված նյութի կիրառելիությունը ներառական ուսուցում կազմակերպելու գործընթացում	Միջին	1	3
	Լավ	39	48
	Գերազանց	111	125
Դասընթացի ընթացքում կիրառված ուսուցման մեթոդները	Միջին	1	2
	Լավ	33	62
	Գերազանց	119	112
Դասընթացի ընթացքում բաշխվող նյութերի որակը	Միջին	-	-
	Լավ	38	-
	Գերազանց	114	-
Դասընթացի ընթացքում ներկայացված նյութի մատչելիությունը	Ցածր	-	6
	Միջին	2	8
	Լավ	35	43
	Գերազանց	110	119
Դասընթացի ընթացքում տեխնիկական ապահովվածությունը	Ցածր	1	5
	Միջին	4	24
	Լավ	60	52
	Գերազանց	86	95
Դասընթացի անցկացման վայրի ընտրություն	Ցածր	1	6
	Միջին	10	23
	Լավ	75	91
	Գերազանց	62	56
Դասընթացի անցկացման ծանրաբեռնվածությունը	Միջին	3	6
	Լավ	69	48
	Գերազանց	81	122

Դասընթացի քննարկումների արդյունավետությունը	Միջին	-	-
	Լավ	35	43
	Գերազանց	122	133
Նյութի մատուցման դասընթացավարի հմտությունները	Միջին	-	-
	Լավ	10	24
	Գերազանց	140	152
Մատուցվող նյութի դասընթացավարի իմացությունը	Միջին	1	2
	Լավ	10	17
	Գերազանց	139	157
Ուսուցման համար դրական մթնոլորտի ստեղծումը դասընթացավարի կողմից	Միջին	1	-
	Լավ	18	26
	Գերազանց	128	150
Խմբի հետ աշխատելու դասընթացավարի ունակությունները	Միջին	1	6
	Լավ	14	22
	Գերազանց	133	158

Բացի վերոգրյալից, գնահատման հարցաթերթիկում ունկնդիրները կատարել են հետևյալ մեկնաբանությունները /ներկայացվում են խմբավորված տարբերակով/՝

1. Դասընթացն անցկացվել է բարձր /գերազանց/ մակարդակով:
2. Դասավանդողների և դասավանդվողների փոխհարաբերությունները հաճելի էին, կիրառված մեթոդները կիրառելի են դասավանդման պրակտիկայում:
3. Առկա է լրացուցիչ գրականության պակաս:
4. Դասընթացը շատ կառուցողական էր, անցել է շատ լավ մթնոլորտում, շատ են եղել օգտակար քննարկումներ: Ցանկություն է հայտնվել համոզել բոլորին ներառական կրթության ներդրման անհրաժեշտության մասին:
5. Ցանկություն է հայտնվել, որ դասընթացին մասնակցեր հատուկ կրթություն իրականացնող դասախոս կամ ուսուցիչ փորձի փոխանակման նպատակով և արտասահմանից ներկայացուցիչ, ով կներկայացներ արտասահմանյան փորձը:

Միաժամանակ, ծրագրի շրջանակներում 2015 թ-ին իրականացվել է վերապատրաստվողների ինքնագնահատում նախօրոք կազմված ինքնագնահատման 10 միավորանոց սանդղակով կազմված հարցաթերթիկի հիման վրա /0-ն՝ նվազագույն միավորը, 10-ը՝ առավելագույն միավորը/, որի արդյունքները ներկայացված են ստորև.

1. «ՆԿ իրականացման հիմնավորման վերաբերյալ տեղեկատվության մակարդակը՝ միջազգային փաստաթղթերի և մարդու իրավունքների առումով» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	14	-
1	17	-
2	15	-
3	24	1
4	21	2
5	28	5
6	10	6
7	4	24
8	4	41
9	-	50
10	-	8

2. «ՆԿ վերաբերյալ գիտելիքների մակարդակը» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	11	-
1	9	-
2	21	-
3	22	1
4	15	1
5	24	2
6	11	2
7	9	11

8	11	59
9	-	51
10	-	6

3. «ԿԱՊԿՈՒ անձ հասկացության մասին պատկերացումների և գիտելիքների մակարդակը» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	6	-
1	7	-
2	11	-
3	27	1
4	20	-
5	17	1
6	20	2
7	12	12
8	8	39
9	3	58
10	-	20

4. «Հատուկ և ՆԿ տարբերակման անհրաժեշտությունը գիտակցելու մակարդակը» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	9	-
1	1	-
2	15	-
3	20	1
4	20	-
5	22	1
6	14	1
7	12	14
8	12	30
9	2	52
10	5	32

5. «Ինտեգրված կրթության անհրաժեշտության գիտակցման մակարդակը» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	9	-
1	5	-
2	19	-
3	22	1
4	16	1
5	21	3
6	14	4
7	11	13
8	10	40
9	5	48
10	3	25

6. «ՆԿ անհրաժեշտության գիտակցման մակարդակը» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	4	-
1	5	-
2	21	-
3	12	1
4	13	-
5	22	3
6	7	6
7	16	7
8	21	29
9	7	57
10	7	31

7. «Ներառական գործընթացինն մասնակցելու պատրաստակամության մակարդակը» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	3	-
1	2	-
2	8	-
3	9	-
4	10	2
5	18	4
6	12	2
7	10	5
8	18	24
9	9	45
10	29	38

8. «Ներառական գործընթացի ձևերին և մեխանիզմներին տիրապետելու մակարդակը» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	25	-
1	13	-
2	11	-
3	16	1
4	22	2
5	28	3
6	9	5
7	7	19
8	10	48
9	2	45
10	3	13

9. «ՆԿ իրականացման համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների մակարդակը» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	14	-
1	22	-
2	15	-
3	13	2
4	29	-
5	18	3
6	9	4
7	5	24
8	9	52
9	1	41
10	-	10

10. «ՆԿ իրականացնելու Ձեր պատրաստակամության մակարդակը» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Իմացությունը դասընթացից առաջ	Իմացությունը դասընթացից հետո
0	-	-
1	5	-
2	9	-
3	11	1
4	9	2
5	20	1
6	7	6
7	11	6
8	22	24
9	24	45
10	25	49

11. «Որքանով իրականացան Ձեր ակնկալիքները դասընթացի արդյունքում» հարցին աղյուսակում նշված քանակի ունկնդիրները տվել են հետևյալ ինքնագնահատականները՝

Միավորներ	Դասընթացի ընթացքում
0	-
1	-
2	-
3	1
4	-
5	-
6	
7	6
8	17
9	47
10	62

Ինքնագնահատման հարցաթերթիկում ունկնդիրները կատարել են հետևյալ մեկնաբանությունները /ներկայացվում են խմբավորված տարբերակով/՝

1) Դասընթացը լինի շարունակական և ավելի երկարատև:
2) Կրկին մասնակցել:
3) Իմանալ ավելին:
4) Դասընթացներին ներգրավել մանկավարժ ուսանողների:
5) Լսարանային պայմանները շոգ են: Նախընտրելի է Երևանից դուրս կազմակերպվող դասընթացները և այլն:

Ունկնդիրների ինքնագնահատման և գնահատման հարցաթերթիկների վերլուծված վերոգրյալ ցուցանիշները կարող են հիմք հանդիսացել հետագայում դասընթացների որակի բարելավման աշխատանքներ իրականացնելու համար: